Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

*Ազգային Պատրիարքարանի*

---

# ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

## ԲԱՑՈՒՄ 1885 ԱՄԻՆ

## ՆԻՍՏ Է·

2 *ՕԳՈՍՏՈՍ* 1885




## Կ. ՊՈԼԻՍ

—

1885

# ԴԻՒԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

## ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

| | | | |
|---|---|---|---|
| Տիգրան | Էֆէնտի | Եուսուֆեան | Ա. Ատենապետ |
| Յովհաննէս | » | Թորոսեան | Բ. » |
| Յարութիւն | » | Թիրեաքեան | Գ. » |
| Յակոբ | » | Գուրգէն | Ա. Ատենադպիր |
| Ստեփան | » | Տամատեան | Բ. » |
| Միհրան | » | Տէօքմէճեան | Գ. » |

### Ձեռնհասութեան Դիւան

Մատթէոս Եպիս. Իզմիրլեան Ատենապետ
Գարեգին Վարդապետ Թաթարեան
Միքայէլ Էֆէնտի Մամիկոնեան

### Դաստիարակութեան Դիւան

Գաբրիէլ Էֆ. Նորատունկեան Ատենապետ
Գասպար » Գասպարեան
Մկրտիչ » Մեղպուրեան

### Կալուածոց Դիւան

Յովհաննէս Էֆ. Թորոսեան Ատենապետ
Միհրան » Զօպանեան
Նշան » Պօյաճեան

### Համարակալութեան Դիւան

Գառնիկ Էֆ. Յովակիմեան Ատենապետ
Կարապետ » Սըվաճըեան
Մկրտիչ » Ճանըմեան

### Յարաբերութեան Դիւան

Յովհաննէս Էֆ. Նուրեան Ատենապետ
Համբարձում » Մաղպուլեան
Ռէթէոս » Պէրպէրեան

### Նախաձեռնութեան Դիւան

Յարութիւն Էֆ. Մէրեէմ:Գուլի Ատենապետ
Յակոբ » Պօչնաքեան

### Իրաւասութեան իւան

Յովհաննէս Բէյ. Մկրեան Ատենապետ
Յակոբ Էֆէնտի Արշակ
Ղազար » Հովուեան

### Խմբագրութեան Դիւան

Կարապետ Էֆ. Իւթիւճեան Ատենապետ
Մկրտիչ » Մէլիքեան
Համբարձում » Ալտաճեան

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

## ԲԱՑՈՒՄՆ 1885 ԱՄԻ

---

## ՆԻՍՏ Է.

2 ՕԳՈՍՏՈՍ 1885

ՆԱԽԱԳԱՀ. — *Սրբազան Պատրիարք Հայր.*
ԱՏԵՆԱԴԵՏ. — *Տիգրան Էֆէնտի Եուսուֆեան.*

---

# ՕՐԱԿԱՐԳ

Ա. — *Տեղեկագիրք Նախաձեռնութեան և Համօրականութեան Դիւանաց վասն հաստատման մի Ընծայարանի (Ճարանաչարին Վէճաքանարեան)*

Բ. — *Տեղեկագիր Համարատուութեան Ազգային Կեդր. Վարչութեան Կրօն. Ժողովոյ.*

Գ. — *Խնդիր վերաքննութեան Ազգային Սահմանադրութեան.*

---

*Ընդ Նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր, Ատենադպիր Էֆ. անուանը կը բանայ ժամը 3 ին ի ներկայութեան 38 Երեսփոխանաց որոց թիւն ի վերջէ կը յանգի 46 ի։*

*Վարչութեան Կրօնական ժողովն գրեթէ իւր ամբողջութեամբ ներկայ էր նաև, իսկ Քաղաքական ժողովէն ոչ որ ներկայ էր։*

## ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

### 1.

Յայտարարութիւն ի Սրբազան Նախագահէ

ԱՏԵՆԱԴԵՏ ԷՖ. — *Ատեանն բացուած է Տեարք. այլ ըստ որում մեր Սրբազան Նախագահն խօսք ուզած է, ուստի ատենական գործողութեանց չանցած, կը խնդրեմ Նորին Սրբազնութենէն որ հաճի խօսք առնել։*

Ս. ՆԱԽԱԳԱՀ. — *Ժողովդ գործի չձեռնարկած, հարկ կը համարիմ մի քանի կարեւոր տեղեկութիւններ հաղորդել Երեսփոխան Տեարցդ։*

*Որչափ ալ որ Ընծայարանի խնդիրն ժողովոյդ Օրակարգին առաջին խնդիր նշանակուած է և որոշուած՝ որ Քաղաքական ժողովն խնդրոյն դրամական մասին նկատմամբ իւր կարծիքն բերէ այսօր. սակայն այս վերջինն հարկ գտնեց խնդիրն Խառն ժողովոյ մէջ յուզել։ Ուստի, կարծեմ հարկ կըլլայ այդ խնդիրն*

այսօր յետաձգել, որպէս զի Խառն Ժողովը, մինչեւ յառաջիկայ նիստ կարենայ իւր կարծիքը ներկայել Ձեզ :

Երկրորդ, Ս. Երուսաղէմայ Վանուց Միաբանութեան Ընդհ. Ժողովն՝ ըստ իւր սովորականութեան՝ իւր տարեկան համարատուութիւնն և ներկայ 1885–86 տարւոյ ելեւմտացոյցն յղած է Ազգ. Ժողովոյդ . ուստի, եթէ կարելի է, կ'առաջարկեմ որ նոյն պաշտօնաթուղթք Համարակալութեան Դիւանին յղուելէ առաջ մի անգամ կարդացուին աստ յատենի Ժողովոյ :

Նոյնպէս կուզեմ աւետել Ժողովոյդ թէ՝ Կայսերական Կառավարութիւնն բարեհաճեցաւ շնորհել մեր Պատրիարքական Պերաքն՝ յար և նման նախորդ Պատրիարքական Պերաքներուն: Առաւել եւս ուրախութեամբ կը փութամ աւետել թէ Առաջնորդայ Պերաքներն ալ, որոց մէկ երկուքն հանգուցեալ Ներսէս Պատրիարքի ժամանակ փոփոխմամբ յանձնուած էին, իրենց նախկին տրամադրութեամբք և անփոփոխ հետըզհետէ պիտի յանձնուին Պատրիարքարանիս, ինչպէս որ արդէն յանձնուած է Տրապիզոնի նորընտիր Առաջնորդին Պերաքը :

Կը յուսամ, Տեարք Երեսփոխանք, որ մօտ օրէն Առաջնորդաց առաջնութեան խնդիրն ալ, ըստ բաղձանաց Ազգին, իւր լուծումը կը գտնէ ։

Կը մաղթեմ որ ամենակարողն Աստուած դարուց ի դարս անսասան պահէ Գահն Օսմանեան և շնորհէ երկարութիւն կենաց մեր առատագութ և ողորմած Կայսեր, ինչպէս և իւր լուսամիտ Նախարարաց :

ԵՐԵՍՓՈԽԱՆՔ (Յոտնկայս) Ամէ՛ն :

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. էֆ.— Կառաջարկեմ որ Ազգային Ժողովն յոտնկայս յայտնէ իւր խորին շնորհակալութիւնն առ Վեհափառ Կայսրն մեր Սուլթան Համիտ-Խան, ինչպէս նաեւ առ Սրբազան Նախագահն մեր, որ ազգային առկախ խնդրոց բարւոք կարգադրման մասին ջանք և աշխատութիւն չի խնայեր :

ՋԱՅՆԵՐ.— Շնորհակա՛լ ենք, շնորհակա՛լ:

Ս. ՆԱԽԱԳԱՀ.— Շնորհակալութիւն յայտնեցէք միմիայն մեր Վեհափառ Սուլթանին : Իսկ ինձ համար բնա՛ւ հարկ չկայ շնորհակալութեան : Ես պարտիմ շնորհակալ լինել Ազգային Ժողովիդ որ կ'աջակցի մեր աշխատութեանց և կը խրախուսէ զմեզ: Միայն կը խնդրեմ որ ներողամիտ աչօք նայիք մեր ակամայ թերութեանց :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. էֆ. — Սրբազան Հա՛յր, դուք Ձեր պարտքը կը կատարէք, մենք ալ մեր պարտքն :

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ. — Ուրեմն կը հրաւիրեմ զՁեզ, Տեարք, յոտնկայս խորին շնորհակալութիւն յայտնել առ բարեխնամ Կայսրն մեր, Վեհ. Սուլթան Ապտիւլ–Համիտ Խան, որոյ համար երկար կեանք կը մաղթեմք, ինչպէս նաեւ յաջողութիւն Իւր լուսամիտ Նախարարաց հայրենաշէն գործոց : Կառաջարկեմ միանգամայն որ Վարչական Խառն Ժողովն Ազգ. Ժողովոյ սոյն շնորհապարտ զգացումներն պաշտօնապէս և իւր պատշաճ դատած եղանակաւ հաղորդէ առ Կայսերական Կառավարութիւնն :

Ժողովն միաձայնութեամբ համակերպելով Ատենապետ էֆէնտիի առաջարկութեան՝ ըստ այնմ իւր խորին շնորհակալութիւնն յոտնկայս կը յայտարարէ առ Վեհ. Սուլթանն:

Նոյնպէս, Ատենապետ էֆէնտիի հրաւիրմամբ, Ժողովն յոտնկայս շնորհակալութիւն կը յայտնէ Ս. Պատրիարք Հօր, որ յաջողած էր կարճ ժամանակի մը մէջ լուծել ազգային առանձնաշնորհմանց խնդրոյն մէկ կարեւոր

մասը՝ ազգային շահուց բոլորովին համապատասխան եղանակաւ ։

## 2.

### Բացակայութիւնք

Երեսփոխաններէն՝
Մաքսուտ Սիմոն պէյ,
Նորատունկեան Գաբրիէլ էֆէնտի և
Սէլիմիէճեան Գրիգոր էֆէնտի
անձնական տկարութեամբ ժողովոյ այս օրուայ նիստէն բացակայ մնալնին գրով հաղորդած լինելով Դիւանին, Ատենապետ էֆէնտի նոյն անունքն յիշատակելէ յետոյ, իբր օրինաւոր բացակայք՝ արձանագրել կուտայ ի Տումարի ներկայութեան ։

## 3.

### Երեսփոխանական հրաժարագիր Գասպար Էֆ. Զերազի

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մեր պաշտօնակիցներէն Զերազ Գասպար էֆէնտի հրաժարական գրկած էր անցեալ նստին, սակայն նոյն օրը որոշեալ ժամանակէն ուշ հասած լինելով, այսօր միայն կը հաղորդեմ զայն ժողովիդ ։

Ատենադպիր էֆէնտի կընթեռնու զայն.

Տէր Ատենապետ
Ազգային Երեսփոխանական ժողովոյ,

Տեսնելով որ Ազգային ժողովոյ նիստերուն կանոնաւորապէս ներկայ գտնուելու և իբր Երեսփոխան աշխատակցելու փափաքիս հակառակ, բաւական ատենէ ի վեր հեռի կը մնամ պարտականութիւնս կատարելէ, և որ ցաւալին է, գոնէ ասկէ վերջը կանոնաւոր ընթացք մը ունենալու յոյսերս ալ երթալով կը նուազին Ուրբաթօրեայ անվերջ ու անհատնում զբաղմանց առջև, նախընտրեցի հրաժարիլ Երեսփոխանական պաշտօնէս ուր կոչուած էի անարժանաբար ։

Ուստի խնդրեմ բարեհաճիք, Տէր Ատենապետ, դնել զայս հրաժարագիր յընդունելութիւն ժողովոյդ, և ընդունիլ խորին մեծարանացս հաւաստին ։

Գ. Զերազ

Ղալաթիա, 19 Յուլիս 1885

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք թէ Զերազ Գասպար էֆէնտի իւր հրաժարման իբր պատճառ՝ յառաջ կը բերէ իւր բազմազբաղ վիճակն ։ Ուստի որոնք որ համամիտ են այն հրաժարականի ընդունելութեան, թող հաճին յայտնել իրենց հաւանութիւնն ։

Քուէարկութիւն կատարուելով, ժողովն միաձայնութեամբ ԿԸՆԴՈՒՆԻ զայս հրաժարական և հետևաբար Ատենապետ էֆէնտի Երեսփոխանութենէ հրաժարեալ կը յայտարարէ զԳասպար էֆէնտի Զերազ ։

## 4.

### Վաւերացումն Երեսփոխանական ընտրութեանց Գում-Գաբուի եւ Զմիւռնիոյ Գաւառական ժողովոյ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մայր Եկեղեցւոյ թաղէն ինչպէս նաև Զմիւռնիոյ Գաւառէն Երեսփոխանական ընտրութիւնք կան կատարուած, որոց տեղեկագիրք և ընտրելոց յանձնառագիրք հանդերձ Ս. Պատրիարք Հօր ապահովագրովն յանձնուած են Դիւանիս ։

Ատենադպիր էֆ. կընթեռնու այն պաշտօնագրերն ։

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի
Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ

Ըստ տեղեկագրի Գաւառական Ընդհանուր Ժողովոյ Զմիւռնիոյ՝ նոյն վիճակէն Երեսփոխան ընտրուած է,

Պօղոս էֆէնտի Տիլպէրեան,

որ յանձն առած է վարել սոյն պաշտօնն։

Մայր Եկեղեցւոյ և Միացեալ Թաղից կողմէ այս վերջի անդամ ընտրեալ և հրաժարեալ Երեսփոխաններէն Ճենազեան Երամ Էֆէնտին՝ իրեն եղած յորդորանաց վրայ յօժարած է ստանձնել սոյն պաշտօնն։

Այս երկու ընտրելոց օրինական հանգամանքն ստուգուած և Ազգ. Սահմանադրութեան համաձայն գտնուած լինելով՝ կը փութամք Զմիւռնիոյ Գաւառական Ընդհ. Ժողովոյ տեղեկագիրն և ընտրելոց յանձնառութեան գրերն ներկայ ծանօթագրով հաղորդել Պատկառելի Ժողովոյդ, ինչպէս որ հաղորդած եմք յառաջագոյն Մայր Եկեղեցւոյ և Միացեալ Թաղից ընտրութեան տեղեկագիրն։

Մնամ աղօթարար

Պ. Կ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔ-ԵՊԻՍԿՈՊՈՍ

1 Օգոստոս 1885

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նախ ձեռք կ'առնումք Գում-Գաբուի և միացեալ Թաղից Երեսփոխանական ընտրութեան խնդիրն։

Ինչպէս կը յիշէք, սոյն Թաղէն ընտրեալ և հրաժարեալ 11 Երեսփոխանաց հրաժարականներն Ժողովս չընդունելով, խնդրած էր Սրբազան Պատրիարք Հօրմէն որ համոզէ զնոսա ետ առնուլ իւրեանց հրաժարականքն։

Այժմ, նոյն Երեսփոխաններէն՝ Երամ էֆ. Ճենազեան, Նորին Սրբազնութեան հրաւիրմամբ, յետս կոչած լինելով իւր հրաժարագիրն, կը փութամ սոյն ընտրութիւնն, որոյ տեղեկագրին օրինաւորութիւնն նախապէս ընդունուած է Ժողովէդ, Ձեր վաւերացման ենթարկել։

Ատենադպիր Էֆէնտի նախ կընթեռնու ընտրելոյն յանձնառագիրն։

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայր,

Մայր Եկեղեցւոյ և Միացեալ Թաղից կողմանէ Ազգ. երեսփոխան ընտրուելով, թէև իմ անձնական զբաղմանցս ծանրութեան պատճառաւ հրաժարական տուած էի, սակայն Ձեր Բարձր Սրբազնութեան կողմէ Գեր. Պատրիարքական փոխանորդ Ս. Հօր յորդորանաց առջև յանձն առի ընդունիլ Երեսփոխանական պաշտօնն և խմբվանն ծառայել Ազգիս։

Մնամ

Ամեն. Սրբազնութեանդ
խոնարհ որդի
Ե. ՃԵՆԱԶԵԱՆ

Գում-Գաբու, 23 Յուլիս 1885

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ով որ կընդունի Ճենազեան էֆէնտիի ընտրութեան օրինաւորութիւնն, թող հաճի յայտնել զիւր ձեռնամբարձ հաւանութիւնն։

Քուէարկութիւն կատարուելով, Ժողովս միաձայնութեամբ ԿԸՆԴՈՒՆԻ սոյն ընտրութեան օրինաւորութիւնն։ Հետևաբար Ատենապետ էֆէնտի Գում-Գաբուի և միացեալ Թաղից կողմանէ Ազգային Երեսփոխան ԿԸ ՀՌՉԱԿԷ՝

զԵրամ էֆ. Ճենազեան

(Յետ ստորագրութեան)

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ. — Շնորհակալութիւն կը յայտնեմ Ճենազեան էֆէնտիին, որ համակերպելով Ժողովոյս որոշման, յետս կը կոչէ իւր հրաժարականն։ Փափաքելի է որ միւս

հրաժարեալք ևս ետ առնուն իրենց հրաժարականներն և գան մասնակցիլ Ժողովոյս աշխատութեանց :

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՖ. — Երբ մէկը Ազգային պաշտօն մը կընդունի, իւր պարտքն և եթ կը կատարէ և շնորհակալ լինելու պէտք չըկայ : Ճենազեան էֆէնտի իւր հրաժարականն ետ առնլով իւր պարտքն միայն կատարած է :

ՁԱՅՆԵՐ. — Շատ ճի՛շդ է. կը կրկնեմք :

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ. — Ես երբ կ'առաջարկեմ շնորհակալութիւն յայտնել, ասի ոչ թէ Ազգային պաշտօն մը ընդունած լինելուն համար է, այլ Ժողովոյս կամքն յարգած լինելուն համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թորոսեան էֆէնտի կ'ուզէ շնորհակալութիւն յայտնել առ Ճենազեան էֆէնտի, որ յարգած է Ժողովոյս կամքն և ըստ այնմ ընդունած Երեսփոխանական պաշտօնն. իսկ Թիրեաքեան էֆէնտիի՝ առ այս ըրած դիտողութիւնն Սահմանադրական տրամադրութիւնը կը յիշեցնէ, որ կը պահանջէ իւրաքանչիւր անհատէ՝ իւր կարողութեան չափովն մասնակցիլ Ազգային ծախուց և յանձն առնուլ իրմէ խնդրուած Ազգային պաշտօններն : Սակայն ընդհանրապէս սովորութիւն եղած է մեր մէջ, գրեթէ միշտ Սահմանադրական իրաւունքներն վայելել և չուզել կատարել առ Ազգն ունեցած պարտականութիւններնիս :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կարճ դիտողութեան մը համար խօսք կուզեմ : Թէ՛ Թորոսեան և թէ՛ Թիրեաքեան էֆէնտիք իրաւունք ունին : Թիրեաքեան էֆէնտի մասամբ կը յայտնէ որ այս օրինակ շնորհակալութիւնք յաճախ կրկնուելով օրէնքի կարգ չանցնին, վասն զի սովորութիւն դարձեր է հրաժարիլ միշտ Ազգային պաշտօններէ և ետ չառնուլ հրաժարականն, մինչև որ չաղաչեն ու չպաղատին :

Իսկ Թորոսեան էֆէնտիի առաջարկած շնորհակալութիւնն ալ ուրիշ բանի համար չէ, այլ միայն անոր համար որ սովորութիւն դարձած է ընտրելոց՝ հրաժարիլ և դժուարաւ ետ առնուլ իրենց հրաժարականն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ազգային Ժողովոյ շնորհակալութիւնն պէտք չէ՛ այդքան աժան ծախել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ կարգն կուգայ Զմիւռնիոյ Երեսփոխանական ընտրութեան վաւերացման : Ուստի կը հրաւիրեմ զԱտենադպիր էֆէնտի ընթեռնուլ Գաւառական Ժողովոյ Տեղեկագիրն, ինչպէս և ընտրելոյն յանձնառագիրն :

Ամենապատիւ Սրբազան Հայր

Գեր. Պատր. Տեղապահ Հօր կողմէ Ապրիլ 4 ամսաթիւ և 1104 համար կրող պաշտօնագիր մի ստացանք, որով կը յանձնարարէր մեզ Ազգային Կեդրոնական Ժողովին համար վիճակիս Գաւառական Ժողովոյ կողմէ Երեսփոխան մի ընտրել տալ :

Թէպէտ և Նախորդ Երեսփոխանին տեղ Վսեմ. Ս. Ապրօ էֆէնտին Երեսփոխան ընտրուած և ի պաշտօնէ Ազգ. Պատրիարքարանէդ ծանուցուած էր, սակայն իմանալով որ նա իր հրաժարականը տուած է, արժան դատեցինք վիճակիս Գաւառական Ժողովը ի նիստ գումարել և Նոր Երեսփոխանի ընտրութեան խնդիրը վերստին առաջարկել :

Արդ՝ Գաւառական Ժողովն իր 30րդ. նստին մէջ, որ յ3րդ. Յուլիսի ամսոյ, Սահմանադրութեան տրամադրութեանց համեմատ ընտրութեան ձեռնարկեց, և ձայնից ամբողջութիւնն շահեցաւ

Զմիւռնացի Մեծ. Պօղոս էֆէնտի Յ. Տիւպէրեան, որ և ըստ օրինի կեդրոնական Երեսփոխան հրատարակուեցաւ։

Սոյն ընտրութիւնն Ձեր Սրբազնութեան ներկայելով՝ խնդրեմք որ բարեհաճիք հրաւէր կարդալ առ նորընտիր Երեսփոխան մեր, որ Մայրաքաղաքդ կը բնակի, ինչպէս և մեք յատկապէս գրած եմք նմա ընդունիլ Ազգային սոյն կարևոր պաշտօնն և անձնուիրաբար կատարել զայն յօգուտ Ազգին։

Ամենապատիւ Սրբազնութեան Ձեր
Մնամ աղօթակից
Առաջնորդ Զմիւռնիոյ
Մելք. Եպիս. Մուրատեան
Դիւան Գաւառ. Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Մ. Մամուրեան (Բացակայ)

Զմիւռնիա, 20 Յուլիսի 1885

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայր,

Պատիւ ունեցայ ստանալ Բարձրաշնորհ Սրբազնութեանդ գիրը, որով նուաստիս Զմիւռնիայէն Երեսփոխան ընտրուիլը կը ծանուցանէք ըստ տեղեկագրի, որ յիշեալ վիճակի Գերապատիւ Առաջնորդին և Գաւառական Ընդհանուր Ժողովոյ Դիւանին կողմանէ յուղարկուած է ի Պատրիարքարանդ։

Կը փութամ ներկայիւս հաղորդել Ձեր Բարձրաշնորհ Սրբազնութեան յանձնառութիւնս նոյն պաշտօնին, որում հայրենակիցքս պատիւ ըրած են կոչել զանարժանութիւնս։

Մնամ խորին ակնածանօք
Ձեր Ամեն. Սրբազնութեանդ
Ամենախոնարհ ծառայ
Պօղոս Տիւպէրեան

Կ. Պօլիս 31 Յուլիս 1885

( Յետ ընթերցման )

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Սոյն Տեղեկագրին օրինաւորութեան մասին դիտողութիւն ընո՞ղ կայ։

**ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ.** — Այդ տեղեկագրին տակը Ատենապետի ստորագրութիւնը չկայ։ Կրնանք գիտնալ թէ՝ ի՞նչ է պատճառըն։

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Արդէն Տեղեկագրին ներքև Առաջնորդ Սրբազանի ստորագրութիւնն կայ։ Իսկ Ատենապետի ստորագրութեան քով «Բացակայ» նշանակած է, որ ըսել է թէ ստորագրութեան պահուն միայն չէ կրցած ներկայ գտնուիլ։

**Տ. Ե. ՎՐԴ. ԱՅՎԱԶԵԱՆ.** — Փափաքելի էր որ ուրիշ անգամներ այս տեսակ օրինական ձևակերպութեանց մասին տեղի ունեցած թերութիւնք չկրկնէին. վասն զի հարկ է գիտնալ թէ՝ Ատենապետի ստորագրութիւնն մեծ կշիռ ունի։

**ՓԱՓԱԶԵԱՆ Ս ԷՖ.** — Իրաւացի է։

**Ս. ՆԱԽԱԳԱՀ.** — Եթէ այդ տեղեկագրին մէջ օրինական թերութիւն մը կը տեսնէք, կը խնդրեմ որ մեզ վերադարձնէք. վասն զի այդ տեղեկագիրն ես բերած եմ, նկատելով որ Խառն Ժողովն, որ իւր սեղանին վրայ շատ խնդիրներ ունի, կրնար ըլլալ որ յապաղեցնէր ատոր վաւերացումը։ Ուստի, եթէ թերի կողմ ունի այդ տեղեկագիրն, ինչպէս ըսի, չեմ ուզեր պատասխանատու ըլլալ։

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Ո՛չ, Սրբազան Հայր, այս տեղեկագիրն, ըստ մեր ներքին օրինաց, ո և է թերութիւն մը չի պարունակեր, և ինչպէս ըսի, Գաւառական Ժողովոյ Նախագահն արդէն հաստատած է անոր օրինաւորութիւնն, և միայն Ատենապետի ստորագրութեան քով

«բացակայ» նշանակուած է, որ կը նշանակէ թէ ինքն ալ թէև համամիտ է եղեր, բայց ստորագրութեան պահուն բացակայ գտնուեր է։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Եւ ես այնպէս կը կարծեմ. վասն զի գիտեմ թէ Առաջնորդ Սրբազանին և Ատենապետին մէջ համախոհութիւն կայ միշտ։

Ս. ՆԱԽԱԳԱՀ. — Լաւ. սակայն եթէ ապագային մէջ այդ մասին խնդիր ծագի, յայնժամ այդ տեղեկագիրն խառն ժողովին յղել հարկ պիտի լինի և ոչ ինձ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Զմիւռնիոյ երեսփոխանական ընտրութեան մասին ուրիշ դիտողութիւն ընող կա՞յ։

Ոչ ոք դիտողութիւն ընելով, Ատենապետ էֆէնտի քուէի կը դնէ Զմիւռնիոյ Գաւառական Ժողովոյ տեղեկագրի օրինաւորութիւնն, որ ԿԸՆԴՈՒՆՈՒԻ ձայնից մեծամասնութեամբ։

Հետեւաբար Ատենապետ էֆէնտի, Զմիւռնիոյ Գաւառէն Ազգային Երեսփոխան ԿԸ ՀՌՉԱԿԷ

զՊօղոս էֆէնտի Տիլպէրեան

5.

Վաւերացումն ներկայ շրջանի Ե եւ 83 շրջանի Թ. նիստերու ատենագրութեանց.

ԱՏԵՆԱՊԵՏ. ԷՖ. — Ներկայ շրջանի Երդ. և 83 շրջանի Թրդ. նիստերու ատենագրութիւնք տպագրուած և ժամանակին Երեսփոխան Տեարց բաշխուած լինելով, զայնս Ձեր քուէին կ'ենթարկեմ կարգաւ։

Զայս ասելով, Ատենապետ էֆէնտի հետըզհետէ ժողովոյ ընդունելութեան կենթարկէ նոյն երկու նիստերու ատենագրութիւններն, որք ԿԸ ՎԱՒԵՐԱՆԱՆ առանց ո և է դիտողութեան։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վերջի նստի ատենագրութիւնը այս ժամուս միայն բաշխուեցաւ Երեսփոխանաց և բնականաբար անոր վաւերացումը կը մնայ յաջորդ նստին։

ՁԱՅՆԵՐ. — Շա՛տ, լաւ։

6

Տեղեկագիր Համարատուութեան Ս. Երուսաղիմայ Միաբանութեան Ընդհ. Ժողովոյ. Հաշուեցոյց 1884—85 ամի եւ Ելմտացոյց 1885—86 ամի.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երուսաղիմայ Միաբանութեան Ընդհանուր Ժողովն, ըստ իւր պարտականութեան, բերած է իւր համարատուութեան տեղեկագիրն Ազգ. Ժողովյս, հանդերձ 1884—85 ամի Հաշուեցոյցով և 1885—86ի Ելմտացոյցով։ Այս պաշտօնագրերն, թէ և ըստ օրինի կը յղուին ձեռնհաս Դիւանաց նախաքննութեան, այլ ըստ որում մեր Ս. Նախագահն, նստի բացման պահուն փափաք յայտնեց որ նոյն տեղեկագիրն նախ կարդացուի աստ յատենի Ժողովյս և ապա կատարուի օրինական յղումը, ուստի կը հրաւիրեմ զԱտենադպիր էֆէնտի ընթեռնուլ զայն։

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՖ. — Եթէ չպիտի վիճաբանիք, ապա ուրեմն ի՞նչ հարկ կայ ընթերցմամբ ժամանակ անցնել։

Ս. ՆԱԽԱԳԱՀ. — Արդարեւ Ժողովդ սովորութիւն ունի այդ տեղեկագիրն և հաշուեթղթերն Համարակալութեան Դիւանին յղել։ Սակայն հարկ է գիտնալ թէ՝ այդ տեղեկագիրն Ս. Աթոռոյ վիճակին կատարեալ պատկերն է. թերեւս Միաբանութիւնն գանգատներ ունի, զորս հարկ է որ լսէ Ժողովդ։ Ուստի մասնաւորապէս կը խնդրեմ Ձեզմէ որ պէտք եղած ստիպողականութիւնն տալով այդ պաշտօնագրոյ, քննութիւնք կատարուին և արդիւնքն անմիջապէս հաղորդուի Երուսաղիմայ Ս. Պատ-

րիարքին․ վասն զի մինչեւ ցարդ Միաբանութեան կողմէ Ազգային Ժողովոյդ մատուցուած համարատուութիւնք առանց որ և է դիտողութեան մնացած են և անոնց հասած կամ չհասած լինելն անգամ ծանուցուած չէ առ Միաբանութիւն ։ Այս վիճակի անպատեհութիւնն կրնայ ծանր պատասխանատուութիւն հրաւիրել ապագային ։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Սրբազան Պատրիարք Հայրն պէտք է գիտնայ որ Երեսփոխանք այդ պաշտօնագրերն սերտելու պէտք ունին ։ Ուստի հարկ է զայնս ուրոյն տպագրել և նախապէս բաշխել Երեսփոխանաց ։

Ս. ՆԱԽԱԳԱՀ. — Այդ տեղեկագրին մէջ, վէճի ներքեւ գտնուած խնդրոց մասին յիշատակութիւններ կան ։ Ուստի և անոր այժմէն հրատարակուիլն վնասակար կը գտնեմ և կը փափաքիմ որ միայն ընթերցմամբ գոհ լինինք։

ՄԻ ՔԱՆԻ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ — Բայց ինչ հարկ ընթերցման, քանի որ խնդիր չպիտի լինի ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. Ամէն թուղթ որ Դիւանին կը յանձնուի՝ պէտք է կարդացուի հոս. այս է օրէնքը ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այո՛, մանաւանդ թէ մեր Ս. Նախագահն ալ առ այս փափաք կը յայտնէ ։

Զայս ասելով, Ատենապետ էֆէնտի կը հրաւիրէ զԱտենադպիր էֆէնտի ընթեռնուլ սոյն տեղեկագիրն (1) և անոր յարակից հաշուեթղթերն ։

---

(1) Սոյն տեղեկագրերն Համարակալութեան և Կալուածոց Դիւաններու տեղեկագրաց հետ պիտի հրատարակուին այն նստի ատենագրութեան մէջ, յորում խնդիրն վիճաբանութեան ենթարկի ։

Տ. Գ.

( Յետ ընթերցման )

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Մինչեւ ցարդ Երուսաղիմայ Միաբանութեան հետ՝ իւր համարատուութեանց առթիւ՝ Ժողովոյս բանակցութեան չմտնելուն համար Ս. Պատրիարք Հօր ըրած դիտողութիւններն արդար են. բայց հարկ է գիտնալ թէ այս Ժողովս շատ յանցաւոր չէ այդ մասին, վասն զի կը յիշեմ թէ, ուրիշ անգամ մը նոյն Վանուց մէկ համարատուութիւնը նկատողութեան առնուած ատեն, ինչ ինչ բացատրութեանց պէտք ունեցանք, զորս յանձնարարեցինք Վարչութեան պահանջել Միաբանութենէն ։ Կարծեմ թէ Վարչութիւնը ցարդ այս մասին ոչինչ չէ գըրած Միաբանութեան ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կարծեմ խնդրոյն վըրայ այժմէն վիճաբանութիւն տեղի չկրնար ունենալ, եւ լսելէ յետոյ զայս տեղեկագիր, հարկ է ըստ օրինի յղել զայն Կալուածոց եւ Համարակալութեան խառն դիւանաց ի քննութիւն եւ ի տեղեկագրութիւն որոշեալ պայմանաժամու մը ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Միամսեայ պայմանաժամու ։

Երեսփոխանք ձայնակցելով Ատենապետ էֆ.ի ինչպէս նաեւ Փափազեան էֆէնտիի առաջարկութեանց, ըստ այնմ ԿՈՐՈՇՈՒԻ՝ Երուսաղիմայ Միաբանութեան Ընդհանուր Ժողովոյ համարատուութեան տեղեկագիրն, հանդերձ յարակից հաշուացոյցերով, ՅՂԵԼ Համարակալութեան եւ Կալուածոց խառն Դիւանաց ի քննութիւն եւ ի տեղեկագրութիւն միամսեայ պայմանաժամու ։

# ՕՐԱԿԱՐԳ

## Ա.

Տեղեկագիր Համարատուութեան Ազգ. կեդր. Վարչութեան կրօն. ժողովոյ.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Որքան ալ որ մեր Օրակարգի առաջին խնդիրն է՝ Ընծայարանի հաստատութեան վիճաբանութեան շարունակութիւնը. սակայն, ինչպէս յայտնեց Ս. Պատրիարք Հայրն, կրօն. ժողովոյ սոյն առաջարկի նիւթական մասը հարկ դատուած լինելով Խառն ժողովոյ նկատառման ենթարկել, բնականաբար այսօր կարելի չէ վիճաբանիլ անոր վրայ: Ուստի ձեռք կառնումք Օրակարգի երկրորդ խնդիրն, որ է՝ «Համարատուութիւն կրօնական ժողովոյ» եւ առ այս կը հրաւիրեմ զՆրեսփոխան Տեարս խօսք առնուլ:

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՖ. — Կրօնական ժողովոյ Համարատուութիւնն կը բաղկանայ տասըն երկու երեսներէ, որոց առաջին երկուքը մէկ կողմ առնլով իբր յառաջաբան եւ վերջին երկուքն իբրեւ վերջաբան, մնացեալ ութ երեսներու մէջ ամփոփուած են տասն երեք հանրային խնդիրներ, որոցմով զբաղած է կրօն. ժողովը 44 նիստերու մէջ՝ մեծաւ մասամբ յատկացուած անհատական եւ ամուսնական խնդրոց, զորս արժան չէ դատեր հրապարակ հանել «ըստ նախորդաց իւրոց»: Այս «ըստ նախորդաց իւրոց» բառերն երկդիմի կը թուին ինձ. միթէ՞ այս բառերով կրօն. ժողովն իւր նախորդաց դէմ դատապարտութիւն մը արձակել կուզէ, թէ չէ՝ ինքն ալ անոնց հետեւող լինելն կուզէ հասկցնել:

Կանցնիմ գլխաւոր կէտերուն քննութեան:

Առաջին, Տեղապահական խնդիր. — Տեղեկագիրը կըսէ թէ՝ «ըստ բնական օրինաց եւ «սովորութեան՝ պէտք էր որ Պատրիարքական «Տեղապահ ընտրուէր մի եպիսկոպոս, սակայն արժան դատեց որ սոյն բացառիկ պարագային մէջ այս պաշտօն յանձնել Տ. «Գէորգ Վարդապետ Րուսճուգլեանի»: Ըստ իս, փոխանակ նորութեանց հետեւելու, պէտք է մի անգամ ընդ միշտ որոշել թէ, վարդապետ մը Տեղապահ կրնա՞յ լինիլ թէ ոչ. վասն զի Սահմանադրութիւնը չըսեր թէ՝ Տեղապահըն անպատճառ եպիսկոպոսներէն պէտք է ընտրուի, այլ կըսէ թէ՝ «Կրօն. եւ Քաղ. ժողովք միանալով Տեղապահ մը կընտրեն»: Կրօնական ժողովոյ յիշած բնական օրէնքն ես չեմ կրնար ըմբռնել թէ ո՞րն է. եւ՝ ընդհակառակն՝ եղածն անբնական կը համարիմ, եւ կը կարծեմ որ Տեղեկագրին այս բացատրութիւնը ուրիշ նպատակ չունի այլ օրէնքը սըքօղել....

Տ. Խ. ԱՐՔԵՊՍ. ՆԱՐ–ՊԷՅ. — (Ընդմիջելով) Ըսքօղել եւ ո՛չ սըքօղել:

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՖ. — (Պատասխանելով) Երկու ձեւ արտասանութիւններն ալ կընդունի հայկաբանութիւնը, Սրբազան. եթէ կուզէք, կարող եմ փաստերով հաստատել ըսածս: Բայց ժողովոյ փակումէն յետոյ, վասն զի լեզուաբանական վիճաբանութեան ժամանակ չէ այժմ: (Շարունակելով) Երկրորդ. գալով կրօն. ժողովոյ ձեռնարկած Ընծայարանի խնդրոյն, արդարեւ գովելի ձեռնարկ մ'է այս. բայց կը զարմանամ թէ, ինչո՞ւ համար միայն Քահանայից բարոյական եւ նիւթական վիճակը բարձրացնել կ'ուզուի, իսկ Վարդապետաց եւ Եպիսկոպոսաց համար բնաւ չ'մըտածուիր այս մօտ ձեռնարկ մ'ընել: Միթէ՞ այս վերջնոց շատերն ալ նո՞ւազ պէտք ունին դաստիարակութեան....:

Տ. Խ. ԱՐՔԵՊՍ. ՆԱՐ–ՊԷՅ — (Ընդմիջելով) Եթէ քիչ մ'աւելի բացատրէք ձեր այդ խօսքերն, շնորհակալ կը լինինք:

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՖ. — Միթէ աւելի բացատրութեան հարկ կա՞յ: Կընդունի՞ք թէ

մեր կրօնական դասն կրթութեան եւ դաստիարակութեան գագաթնակէտն հասած լինի, որ այլ եւս բանի մը պէտք չունենայ։ Մեր Ազգն իւր ո՞ր հոգեւոր դպրոցներովն կը փայլի. հա՞րկ է ըսել որ մեր եկեղեցականութիւնն շատ ինկած է, ոչ միայն քահանայք, այլ եւ վարդապետք եւ եպիսկոպոսունք իսկ շատ կարօտ են այն կրթութեան զոր տալ կուզէք...։

**Տ. Խ. ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ.** — (Ընդմիջելով) Այլ և աշխարհականք, այլ և ոմանք յԵրեսփոխանաց։

**ԹԻՐԵԱՔԵԱՆ Ց. ԷՖ.** — Հարկ է՞ ըսել որ կան Եպիսկոպոսունք որ աշխարհականաց ոմանց չափ իսկ քաղաքավարութիւն չունին...

**Ս. ՆԱԽԱԳԱՀ.** — (Առ Ատենաբանն) Ատենաբան էֆէնտի, արդէն, Եկեղեցականաց դասն՝ կաթողիկոսէն սկսեալ մինչև քահանայն՝ անկեալ վիճակ մ'ունի։ Մեր ցաւերն մեզ բաւական են, և կաղաչեմ որ աշխարհականաց ժողովդ ալ մեր վրայ նոր ցաւեր չաւելցնէ։

**ԹԻՐԵԱՔԵԱՆ Ց. ԷՖ.** — (Շարունակելով) Ես ըսել չեմ ուզեր թէ աշխարհականք առհասարակ նախանձելի զարգացման մը հասած են. անոնց զարգացման պէտքն ալ կզգամ և կը յիշեմ Մուրատեանց Սրբազանի մէկ խօսքն թէ՝ «Ո՛չ մեր եկեղեցականք Ղևոնդներ, Սահակներ և Մեսրոպներ են, և ոչ մեր աշխարհականք՝ Վարդաններ և Վահաններ......»

**ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ.** — (Ընդմիջմամբ) Եթէ Ատենաբան էֆէնտին շարունակէր այնպէս, ինչպէս սկսաւ, անշուշտ պիտի տայինք խնդրուած բացատրութիւններն, բայց կը տեսնեմ թէ մէկ կողմէն բացատրութիւն կուզէ և միւս կողմէն կը քննադատէ զմեզ. այս չէ՛ կարելի։

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Այն մարմինն որ համարատուութիւն կը բերէ, յայտնի է թէ քննադատութեան կենթարկուի։ Իսկ եղած քննադատութեանց իրաւացի լինելն կամ չլինելն անշուշտ քննադատեալ մարմնոյն կողմանէ տրուած բացատրութիւններն լսելէ ետև կրնայ երևան ելնել։

**ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ.** — Բայց նախ թող լուսաբանուի մեր կողմանէ տրուելիք բացատրութեամբք, և ապա քննադատելու ելնէ։

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Կը խնդրեմ Եկեղեցական Հայրերէն, որ Ատենաբան էֆ.ի խօսից մէջ, որով Եկեղեցականաց դաստիարակութեան պէտքն կը յիշեցնէ, տարբեր նկատումներ չփնտռեն։ Զի նոյն ինքն Թիրեաքեան էֆէնտին էր որ շնորհակալութիւն յայտնեց այս ընծայարանի ծրագրին հեղինակաց համար։

**ԹԻՐԵԱՔԵԱՆ Ց. ԷՖ.** — (Շարունակելով) Երրորդ, կրօնական ժողովն Ազգային լրագրաց դիտողագիր մ'ուղղեր է՝ հրաւիրելով զանոնք որ կրօնական խնդրոց վրայ զգոյշ լեզուաւ խօսին։ Բայց այս՝ տեղեկագրի մը մէջ զետեղուելու չափ կարևորութիւն ունեցող խնդիր մը չէ և միայն տեղ լեցնելու համար է։

Չորրորդ, ուշադրութեան արժանի է Եկեղեցական հնութեանց և սրբազան անօթից պահպանման համար ղրկուած շրջաբերականն։ Շնորհակալութեան արժանի կը գտնեմ Կրօնական ժողովոյ այս մասին ցոյց տուած նախանձայուզութիւնն, զի այդ հնութիւնք միշտ յարգելի են Ազգին համար, և եթէ անգամ մը ձեռքէ հանուին, անոնց վերադարձն այլ ևս անկարելի կը լինի։ Միայն կը փափաքիմ գիտնալ թէ, արդեօք ո և է առթիւ գործադրուած է՞ այս տնօրինութիւն, վասն զի Կրօնական ժողովն առ այս ձեռք բերուած արդեանց մասին ոչինչ ըսած է։

Հինգերորդ. Դամբանական քարոզներու և յուղարկաւորութեան հանդէսներու մասին

կրօն. ժողովոյ կողմէ եղած տնօրինութիւնն շատ օրինաւոր է ։

Իսկ գալով Հաճնոյ խնդրոյն, կը տեսնեմ որ ասի, թէև մասնաւոր խնդիր մը, բայց և այնպէս տեղեկագրոյն ընդարձակագոյն մասը գրաւած է ։

Ասոնք են ահա տեղեկագրին վրայ իմ դիտողութիւններս, որոց բացատրութիւնն կը խնդրեմ Ս. Հարց կողմէ, եթէ կարելի է ։

(Սոյն պահուն Ս. Նախագահն ստիպողական գործի մը պատճառաւ կը մեկնի ժողովարանէն.)

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Թիրեաքեան Էֆէնտի իւր քննադատութեանց մէջ կէտ մը միայն մոռցաւ յիշել ։ — Կրօնական ժողովոյ համարատուութեան տեղեկագրին մէջ ըսուած է թէ, Ազգային Վարժարանաց մէջ Կրօնի ուսուցման վրայ հսկելու համար կարգուած են յատուկ քննիչներ՝ որք գէթ ամիսը մի անգամ վարժարաններ այցելելով, պիտի տեղեկագրեն առ Կրօն. ժողովն ։ Այս տնօրինութիւնն արդարև գովելի է, բայց զարմանալին սա է որ ես ութ ամիս շարունակ Մայր-Գիւղի վարժարանին մէջ Կրօնի դասատուութիւն ըրի անձնուիրաբար, բայց Կրօն. ժողովոյ կողմը ոչ մէկ քննիչ տեսայ ։ Նոյնպէս Իւսկիւտար Մէզպուրեան վարժարանի հարցաքննութեանց ներկայ էի, բայց հոն ալ Կրօն. ժողովոյ անդամներէն ոչ ոք կար ։ Արդ կուզեմ գիտնալ թէ ինչո՞ւ Կրօն. ժողովոյ սոյն որոշումն չէ գործադրուած. կարելի՞ է արդեօք որ Կրօն. ժողովոյ տեղեկաբեր Սրբազան այս մասին հաճի բացատրութիւն մը տալ ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Բարեբաղդութիւն մ'է որ Սահմանադրութեան 25րդ տարին լրացընելէ և 26րդը մտնելէ յետոյ, Ազգային ժողովս արժանի կ'ըլլայ վերջապէս Վարչութեան մէկ ճիւղին, այն է Կրօն. ժողովոյ համարատուութիւնը տեսնելու և քննութեան առնելու ։ Իրաւ է թէ 1870 էն ասդին զանազան առթիւ և Հարցմանց շնորհիւ մասնակի համարներ առած էինք, բայց այս տեսակ յատուկ համարատուութիւն մը չէինք ընդունած ։ Շատ աշխատեցանք որ համարատուութեան սկզբունքն ընդունուի, սակայն այսօրուան պահուած է եղեր ։ Ի՛նչ և է, ասով ալ գոհ ըլլանք. բնական է թէ երբ մէկը բաղդ մը կունենայ, ուրախ կըլլայ, քիչ մ'ալ ներող աչօք կը նայի. ուրեմն արդարութիւն է որ այժմ հաշտ աչօք յայտնենք մեր դիտողութիւնները, Կրօնական ժողովոյ ապագայ ուղղութեան նպաստելու համար ։

Նախ ընդհանուր կերպիւ շնորհակալութիւն կը յայտնեմ առ Կրօնական ժողովն...

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՖ.—(Ընդմիջելով) Պահ մ'առաջ, երբ Թորոսեան Էֆէնտի կառաջարկէր խնդրոյ մ'առթիւ շնորհակալութիւն յայտնել, ըսինք թէ՝ պարտականութիւնը կատարած է ։ Այժմ որ Կրօն. ժողովն համարատուութիւն բերելով իւր պարտքը միայն կատարած է, ինչո՞ւ կուզէք շնորհակալութիւն յայտնել ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— (Պատասխանելով) Շնորհակալութիւն կը յայտնեմ անձնապէս, վասն զի Քաղ. ժողովն ցարդ չտուաւ իւր համարն. իսկ Սա փութաց ըստ օրինի ներկայացընել զայն ։ (Շարունակելով) Այժմ անցնելով տեղեկագրին քննութեան, Տեղապահի խնդրոյն առթիւ Թիրեաքեան Էֆէնտիի դիտողութիւնները լսեցի. այդ խնդիրն զմեզ կրնայ շատ հեռուն տանիլ. եթէ Կրօն. ժողովն ըստ բնական օրինաց ըսած է, ըսել կուզէ թէ՝ բնական է որ Պատրիարքի մը Տեղապահը Եպիսկոպոս պէտք է ըլլի. եթէ առարկուի թէ Սահմանադրութեան մէջ Եպիսկոպոս բառն չկայ, եկեղեցական բառ ալ չկայ, և միթէ այս պատճառաւ կրնա՞նք աշխարհական մը Տեղապահ կարգել ։ Սա ակներև է թէ քանի որ Տեղապահն՝ ի չգոյութեան Պատրիարքի՝ գործադիր Իշխանութեան պետն է և Թուրքիոյ

բոլոր Առաջնորդական վիճակաց Նախագահն, և քանի որ Պատրիարքն Եպիսկոպոսաց դասէն կ'ընտրուի, կը հետևի թէ Տեղապահն ալ անպատճառ Եպիսկոպոս մը պէտք է լինի և ոչ Վարդապետ ։ Ըստ իս, այս մասին օրինազանցութիւնը այն ժամանակ կը վերնայ, երբ օրէնք դնենք թէ՝ Տեղապահի ընտրութեան ժամանակ՝ որ կը կատարուի Կրօն. և Քաղ. Ժողովոց ձեռամբ, Կրօն. Ժողովոյ անդամ Եպիսկոպոսունք Տեղապահութեան ընտրելի չլինին...։

**ՄԿՐԵԱՆ Տ. Յ. ՔՀՆՅ.** — (Ընդմիջմամբ) ինչո՞ւ համար ։

**ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.**— (Պատասխանելով) Վասն զի Կրօն. Ժողովոյ Եպիսկոպոս անդամոց իւրաքանչիւրն ինք պիտի ուզէ Տեղապահ լինիլ, որով պիտի ծագի Վարդապետ մ'ընտրելու հարկն ։ (Շարունակելով) Գալով Քրիստոսաւոր էֆէնտիի դիտողութեան, իրաւացի կը թուի, ըստ որում Ազգ. վարժարանաց մէջ կրօնի ուսուցման արդիւնքը չէ նշանակուած տեղեկագրին մէջ ։

Յուղարկաւորութեան համար տրուած կանոնն շատ լաւ է . միայն կը փափաքէի որ երբ Պատրիարքն յուղարկաւորութեան մը ներկայ գտնուի, եկեղեցիէն անդին չերթայ . . . ։

**ՁԱՅՆԵՐ.**—Շա՛տ բանաւոր է ։

**ՓԱՓԱԶԵԱՆ ԷՖ.**—(Շարունակելով) Դամբանական քարոզներու մասին եղած տնօրէնութիւնն ալ լաւ է, բայց թերի ։ Պէտք է բացարձակապէս արգիլել որ այն մեծատունն որ իւր կեանքին մէջ երբէք բարեգործութիւն մ'ըրած չէ ու մեռնելէն վերջն ալ կտակ մը չէ թողած Ազգին՝ այդպիսւոյն համար ոչ միայն դամբանական չխօսուի, այլ և բարձրաստիճան եկեղեցականք յուղարկաւորութեան իսկ չերթան ։ Ի՞նչ տխուր բան, կեանքին մէջ բարեգործութիւն չընող հարուստ մը կը մեռնի, և ահա կը տեսնես Վարդապետ, Եպիսկոպոս, Պատրիարք ամէն կողմէ կը հրաւիրուին, կուգան և փառաւոր յուղարկաւորութիւն մը կը կատարեն, իբրեւ թէ աշխարհիս ամենէն մեծ մարդն մեռած լինէր ։ Մեծատունն պէտք է գիտնայ թէ, ինչպէս դրագէտն իւր գրչով, դաստիարակն իւր ճնջով կ'աշխատին ազգին համար, ինքն ալ պէտք է իւր դրամովն աշխատի .

Գալով Հաճնոյ խնդրոյն, չեմ ուզեր մանրամասնութեանց մէջ մտնել, քանի որ Կրօնական Ժողովն կ'ըսէ թէ «այդ խնդիրն փակուած է իրեն համար» ։ Բայց որովհետև լսուեցաւ թէ այս բռնի ամուսնութեան մէջ Հայ Եպիսկոպոս մը մեծ դեր խաղացած է, և թէ մինչև իսկ առագաստի սենեկին դրան առջև հսկած է, մինչ միւս կողմէ գործէ հասկցող երկու երիտասարդք ներսը կ'օգնէին փեսին՝ Տրդատայ և Հոփսիմէի մարդն յաջողապէս ի գլուխ հանելու համար . . . . . . .

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ .** — Մի՛ յիշէք, մի՛ յիշէք ։

**ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.** — (Շարունակելով) Որովհետեւ այս ամենն լսուեցաւ, ուստի հարկ էր խիստ քննութիւն մը կատարել ըստուգելու համար թէ այս լսուածներն ճշմարի՞տ են թէ ո՛չ . որպէս զի եթէ ճշմարիտ չեն, ինչպէս որ հաւանական է, պատուոյ հատուցում տրուէր Գապանճեան Կիրակոս Սրբազանին, իսկ հակառակ պարագայի մէջ՝ եկեղեցականաց Ժողովն հրաւիրուելով կարգալոյծ ընէր զնա ։ Բայց ես այնպէս կը գտնեմ որ այս ամենուն մէջ Բողոքականաց մատը կայ, ինչպէս մտածեցի առաջի օրէն, երբ այս եղելութիւնն իմացայ ։ Ես զայս պատմութիւնը հրատարակող թերթին բան մը չեմ ըսեր, զի կրնայ ըլլալ որ ինքն ալ սխալ տեղեկութիւն առած ըլլայ, բայց գէթ՝ հարկ էր որ վերապահելով գրել ։

Գալով հովուական այցելութեանց խնդրոյն, այս մասին Կրօն. Ժողովոյ դառն յիշատակութիւնն շատ արդարացի է ։ Ինչպէս կը

յիշէք, անցեալ տարի կրօն. ժողովոյ խնդրանօք, 25,000 ղրշ.ի վարկ մը քուէարկեցինք. այժմ կը տեսնուի թէ այդ գումարէն հազիւ 10 ոսկի վճարուեր է, որ կարծեմ Սէլանիկի համար է...

Տ. Տ. ՎՐԴ. ՈՍԿԱՆԵԱՆ — (Ատենադպիր Կրօն. Ժողովոյ) Ես ալ տասն անգամ պաշտօնական նամակ գրուելէ յետոյ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով) Ես 78էն ի վեր շարունակ խօսած եմ այս հովուուական այցելուաց խնդրոյն կարեւորութեան վրայ: Այս խնդիրն մեր Ազգին համար կարի ծանր խնդիր մը կը նկատեմ. Ժողովուրդն հոգեւոր հովուուաց կարօտ է, եւ պէտք է գիտնալ թէ այնպիսի տեղեր կան ուր ժողովուրդն տարիներով ո՛չ քահանայի եւ ոչ վարդապետի երես կը տեսնէ եւ ոչ ալ քարոզ կը լսէ. ուստի, ինչպէս ըսի, այս այցելութեանց պէտքն կենսական է. բայց այդ այցելուք չեն կարող կատարել իրենց յանձնուած պաշտօնն առանց դրամի, զի այժմ ժամանակի պահանջումներն տարբեր են: Ուստի ես ոչ միայն ցաւ կը յայտնեմ, այլ եւ պարսաւանաց քուէ կառաջարկեմ ընդդէմ այն պաշտօնէութեան որ կրօնական պիտոյից համար Ազգ. ժողովէն որոշեալ գումարն զլացեր է տալ Կրօնական ժողովին:

Անցնելով ամուսնական խնդրոյ, քիչ մը առաջ առարկուեցաւ թէ՝ ամուսնական խնդիրներն՝ իբր մասնաւոր և անհատական խնդիրներ՝ չարժեր որ խնդրոյ նիւթ ըլլան: Ընդհակառակն ես կը կարծեմ որ՝ եթէ Կրօն. Ժողովոյ համար առաջին կարեւորութիւն ունեցող խնդիր մը կայ, այն ալ ամուսնական խնդիրն է: Շատ անգամ լրագրաց մէջ կարդացած եմ. Կրօն. ժողովն զբաղեցաւ կարգ մը ամուսնական խնդիրներով, որք զուրկ են «Հանրային կարեւորութենէ»: Ի՞նչպէս կարելի է հանրային կարեւորութիւն չընծայել ամուսնական խնդրոյ երբ ամուսին մը կը մեռնի, «տուն մը կործանեցաւ» կըսենք, կամ այր ու կին մը բաժնուին, «տուն մը լուծուեցաւ կըսենք»: Եւ միթէ՞ ազգն այդ մասնաւոր ընտանիքներէն չի բաղկանար, և միթէ՞ մասնաւոր ընտանիքներն հետզհետէ կործանելով, Ազգը չվնա՞սուիր:

Ես ասոր կարեւորութիւն կուտամ այդ տեսակ ամուսնական դատերու, և կառաջարկեմ ամուսնական խնդրոյ մասին ցարդ ի գործ դրուած դատական եղանակը քննութեան ենթարկել, միանգամայն ամուսնական վճռակագրոց հրատարակութիւնն յանձնարարել Կրօնական ժողովին. զի մեր ժողովրդեան զարգացման և աճման կենսական կէտն է այս: Գուցէ առարկուի թէ՝ հրապարակաւ ամուսնական խնդրոց յիշատակութիւնն ընել չէ ներելի, և թէ՝ այդ հրատարակութիւնք կրնան գայթակղութեանց տեղի տալ: Սակայն գիտէ՞ք թէ երբ գիւղի մի մէջ այր ու կին վէճ կունենան, ամբողջ գիւղացին կիմանայ և երբ Պատրիարքարանի կամ Թաղ. Խորհրդոյ կը դիմեն, ամէն կողմ կը տարածուի խնդիրն. ինչո՞ւ ուրեմն Ազգն ալ չիմանայ և գաղափար մը չի կազմէ իր ներքին կենաց վրայ, մանաւանդ թէ այս հրատարակութիւնք կրնան դէթ բարոյական պատիժ մը նկատուիլ: Ինչո՞ւ չգիտնանք թէ այս տարի քա՞նի այր բաժնուեր է իր կնոջմէն և քանի՞ կին իր ամուսինէն և ի՞նչ պատճառներով. թէ ամուսնութիւնք մեր մէջ աճելո՞ւ վրայ են թէ նուազելու: Հրապարակային դատաստան չէ որ կը պահանջեմ ես, այլ որոշ վճռակագրեր և ընդհանուր տեղեկութիւնք....:

ՀԱՃԵԱՆ Յ. ԷՖ. — (Ընդմիջելով) Ատոնք ի գործ դնելն Կրօնական ժողովոյ չի պատկանիր, այլ Դատաստանական Խորհրդոյ:

(Մի քանի նստարաններէ ընդմիջումներ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թողէ՛ք Ատենաբանին որ շարունակէ:

**ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.** — (Շարունակելով) Գալով քահանայից ծխացոյցին, այս ալ կարեւոր է, եւ մինչեւ իսկ կը կարծեմ թէ առնչութիւն ունի ամուսնական խնդրոյն հետ: Ես քահանաներ գիտեմ որ 200 ծուխ ունին. կան քահանայներ ալ որ 20 ծուխ չունին. ի՞նչ են այս տարբերութեան պատճառք, պէտք է բացատրուին: Ես պարագայ մը միայն կրնամ յիշել որ էապէս կը նպաստէ քահանայից՝ իրենց ծուխն աւելցնելու: Քահանաներ կան որ յաջողութիւն ունին աղջիկներ ամուսնացնելու, ուստի այն ծնողներն որ աղջիկ զաւակ ունին, բնականաբար կը ջանան այդ տեսակ քահանայից ծուխ լինել: Այս եւ ասոր նման պարագաներ պէտք է աչքի առջեւ ունենայ Կրօնական Ժողովն՝ քահանայից ծխացոյցն պատրաստած ժամանակ:

Ասոնք՝ մեր ընկերային, մեր ներքին խնդիրներն են, պէտք է սերտել, դարման խորհիլ:

**ԱՐՓԻԱՐԵԱՆ Ա. ԷՖ.** — Իմ դիտողութիւններս Հաճնոյ բանի ամուսնութեան մասին են.....

**ԳՈՒՐԳԷՆ Ց. ԷՖ.** — (Ընդմիջելով) Արփիար էֆէնտի գտաւ իրեն համար աւագ կարեւորութիւն ունեցող խնդիրն:

**ԱՐՓԻԱՐԵԱՆ Ա. ԷՖ.** — (Պատասխանելով) Ի՞նչպէս կարելի է կարեւորութիւն չընծայել խնդրոյ մը, որոյ մասին Կրօն. Ժողովոյ տեղեկագիրն կըսէ թէ՝ «խնդիրն այլակրօն հասարակութեանց մէջ անգամ ամենածանր գայթակղութեանց տեղի տուած է»: (Շարունակելով) Փափազեան էֆ.ի համակարծիք եմ Հաճնոյ ամուսնական խնդրոյ մասին՝ ամբաստանելոց պատույ փոխարինութիւն տրուած չըլլալուն համար: Արդարեւ Կրօն. Ժողովը Կիլիկիոյ Կաթողիկոսէն կը խնդրէր որ եթէ ըստուգուին Եկեղեցականաց ոմանց վրայ եղած ամբաստանութիւնք, այդ Եկեղեցականք խըստիւ պատժուին՝ սակայն երբ նոքա արդարանան, իրաւունք չէ՞ միթէ որ զանոնք ամբաստանողք անպատիժ չմնան: Կիլիկիոյ Կաթողիկոսն ըմբռնած էր այսպիսի պատժոյ մը պէտքը եւ կը յանձնարարէր Կրօնական Ժողովին որ «Գտնէ եւ ըստ արժանւոյն պատժէ զչարալեզու գրպարտիչսն զայնոսիկ ըստ հոգեւոր եւ մարմնաւոր օրինաց ի պաշտպանութիւն պատուոյ ընդհանուր կղերականութեան»: Արդ, փափաքելի է գիտնալ թէ ինչո՞ւ Կրօնական Ժողովը չկատարեց Կաթողիկոսի այս յանձնարարութիւնը:

Գիտենք որ Կիլիկիոյ Կաթողիկոսը սովոր է «մարմնաւոր օրինաց» դիմել ամենափոքր առիթներու մէջ իսկ. ինչո՞ւ այսպէս չընել այս օրինակ ծանր խնդրոյ մ'առթիւ: Կրօն. Ժողովը այդքանով չբաւականացաւ: Ինքը համոզում մը հրատարակած էր եւ ահա՛ այսօր այդ համոզումն ալ ետ կ'առնու յայտարարելով թէ, ինքն «առանց միջամտելու կը բաւականանայ պաշտօնական գրութիւններն հաղորդելով»:

Ի՞նչ եղաւ հետեւութիւնն. լրագիր մը այժմ կը պնդէ թէ իր թղթակցին գրածները ճիշդ լինելու էին, այս թէ ոչ՝ թղթակիցն անպատիժ թողուլ կարելի չէր. Թղթակիցն կը պարծենայ թէ՝ իր գրած ամէն մէկ բառն ստոյգ է, եւ նոյն իսկ Կիլիկիոյէն եկող ճանապարհորդք կերաշխաւորեն այս եղելութեանց ստուգութեան: Ամբաստանեալք չհամարձակեցան սոցա դէմ դատ բանալ, չմոռնանք նաեւ որ՝ այժմ եթէ ուզեն իսկ պատժել, այլ եւս ըստ օրինի ժամանակն անցած է:

Ուրեմն կը տեսնուի թէ՝ այս խնդրոյ մէջ, Կրօնական Ժողովոյ հետեւած ընթացքն ներելի կընէ համոզում գոյացնելու ամենուրեք՝ թէ Հաճնոյ ամուսնական խնդիրն, եթէ ոչ իր ամէն մանրամասնութեանց, գէթ իր ամբողջութեան մէջ դժբախտաբար ստոյգ լինելու է որ ձեռնհաս իշխանութիւնք քննութենէ եւ դատէ խոյս տուին:

**ԹԱԴԷՈՍԵԱՆ Ռ. ԷՖ.** — Ես գոհ եմ կրօնական ժողովոյ համարատուութենէն և կընդունիմ զայն հանդերձ Փափազեան էֆ. ի դիտողութեամբք. միայն թէ ամուսնական խնդիրներն հրապարակ հանելու առաջարկն վնասաբեր կը նկատեմ։

Գալով Հաճնոյ խնդրոյն, ես ալ Կիլիկիայէն նոր եկող անկեղծ և ուսեալ քահանայ մը տեսայ, որ այդ խնդրոյ մասին լրագրական հրատարակութեանց սխալ ըլլալն և կրօնական ժողովոյ համոզման ճշմարտութիւնը կը յայտնէ։

**ԱՂԱԲԷԳԵԱՆ Մ. ԷՖ.** — Կրօնական ժողովոյ տեղեկագրի մասին երբ Թիրեաքեան էֆէնտի իւր հայեացքներն կը յայտնէր, երկու խնդիրներ միայն իմ ուշադրութիւնը գրաւեցին, մին՝ եկեղեցականաց վիճակի բարուոքման խնդիրն, և միւսն՝ Տեղապահի «դասակարգութեան» խնդիրն։

Նախ, խօսելով Տեղապահի խնդրոյն վրայ, հարկ է գիտնալ թէ՝ Հայաստանեայց Եկեղեցւոյն մէջ այդ տեսակ մի նուիրապետական կարգ չկայ. Կաթողիկոսէն սկսեալ մինչև տիրացուն հաւասար են Աստուծոյ Տաճարին առջև։ Թէև կան Եպիսկոպոս, Վարդապետ, Քահանայ, Տիրացու, Ճգնաւոր, և այլն անուամբ դասակարգութիւններ, բայց ասոնք Յունական և Կաթոլիկ Եկեղեցիներէն առնուած նորամուտ բաներ են։ Աստիճանաւորութիւն կայ միայն մեր Եկեղեցւոյ ներքին ծառայութեան բաժանման մէջ, իսկ անկից դուրս, ինչպէս ըսի, ամենքն հաւասար են, և բնաւ նախապատուութիւն չկայ, այնպէս որ, եթէ մէկ ճգնաւոր կատարեալ հաւատքի տէր է և արժանաւոր, կարող է, առանց Եպիսկոպոս ըլլալու, Պատրիարք և մինչև իսկ Կաթողիկոս դառնալ։ Բիւզանդեան Եկեղեցիէն առնուած բաներ են, երբ կըսեն թէ՝ Քահանայն չկրնար դատաւոր կանգնիլ Եպիսկոպոսին, Եպիսկոպոսն Արքեպիսկոպոսին և այլն։ Ուստի ես շատ իրաւացի կը գտնեմ Թիրեաքեան էֆէնտիի այն դիտողութիւնն թէ՝ ընական կարգ չկայ և թէ Վարդապետ մը կարող է Տեղապահ դառնալ։

Կարելի է ինծ հարցնել թէ՝ ուրեմն ի՞նչ էին մեր Սիւնեաց Եպիսկոպոսներն, Ամատունեաց Եպիսկոպոսներն և այլք։ Պէտք է գիտնալ թէ այդ նախահարք նախարարական ցեղէ սերած, մօրուսնին ճերմկած պատկառելի ծերունիներ էին արդիւնաւոր գործերով փառաւորուած, որք ոչ թէ Եկեղեցական ներքին դասակարգութեան շնորհիւ, այլ իրենց պատուովն բարձրացած էին։ Ուստի պէտք չէ բաղդատել զանոնք այն Եկեղեցականաց հետ, որք մեծաւ մասամբ 30 տարեկան, մօրուսնին հազիւ բուսած, ուր տեղ ուսումն առած ըլլալնին անյայտ և անհմուտ անձինք են։

Գալով եկեղեցականաց վիճակի բարուոքման խնդրոյն, չխաբենք ինքզինքնիս. Երուսաղէմ իւր տեղը կեցած է, Էջմիածինն ալ տեսանք, գաւառներն ալ մեր աչքաց առջեւն են, եւ գիտէ՞ք թէ ասոնք ի՜նչ խղճալի վիճակի մէջ են եւ անկարելի է որ Եկեղեցականք իրենք իրենցմէ բարեկարգուին։ Ես Վարդապետներ եւ Եպիսկոպոսներ գիտեմ որ Եկեղեցական պատմութեան իսկ բոլորովին անգէտ են, թողնենք ուրիշ բաները։ Ուստի կը կարծեմ թէ՝ առանց մասնաւոր ձեռնարկներով գոհանալու, Եկեղեցական դասն ամբողջովին բարեկարգելու համար ընդհանուր ձեռնարկի մ'անհրաժեշտ հարկ կայ։ Բայց թէ ո՞վ պէտք է նկատուի Եկեղեցականաց խեղճ վիճակի պատասխանատուն։ Ըստ իս, միակ պատասխանատուն Ազգն է, որ միակ տէրն է Հայաստանեայց Եկեղեցւոյն։ Հայոց Ազգն ինքը պէտք է արժանի զաւակ ըլլի իւր Եկեղեցւոյն եւ իւր ծոցէն դուրս տայ արժանաւոր Եկեղեցականներ։

**Տ. Յ. ՎՐԴ. ԱՐՇԱՐՈՒՆԻ** — Համամիտ եմ Աղաբէնգեանց էֆէնտիի այն կարծեաց թէ, Ազգն ինքն իւր մէջէն պէտք է յարուցանէ

արժանաւոր Եկեղեցականներ ։ Բայց բնաւ համամիտ չեմ Եկեղեցական դասակարգութեան մասին յայտնած կարծեաց ։ Աղաբէգեանց էֆէնտիի նկարագրած Եկեղեցին՝ ոչ թէ Հայոց՝ այլ Հապէշներու եւ Խպտիներու Եկեղեցին է. զի Հայաստանեայց Եկեղեցին, Յոյն եւ Կաթոլիկ Եկեղեցեաց նման, իւր մէջ դասակարգութիւն ալ ունի, նուիրապետութիւն ալ ունի եւ ամեն կարգ ու կանոն. միայն թէ Ազգին ցիր ու ցան վիճակը, քաղաքական դէպքեր եւ այլ պարագայք արգելք եղած են Եկեղեցական կանոնաց կէտ առ կէտ գործադրման ։

ԱՂԱԲԷԳԵԱՆՑ Մ. ԷՖ. — (Յուզմամբ) Քիչ մը առաջ ըսի թէ մեր Եկեղեցականներէ շատերն չեն հասկնար նոյն իսկ Եկեղեցական պատմութեան բառերն. ահա ատոր մէկ ապացոյցն տուաւ Արշարունի Վարդապետ ։ Խնդրեմ, ըսէք իրեն՝ թէ ես իրմէ քաջ գիտեմ թէ ինչ է Հայաստանեայց Եկեղեցին և բնաւ իրմէ ուսանելու պէտք չունիմ։ Ես, Աղաբէգեանս, որ այդ Վարդապետին նման մօրուաւոր աշակերտներ հասուցած եմ, կը շփոթե՞մ եղեր Հայաստանեայց Եկեղեցին Հապէշ և Խպտի Եկեղեցեաց հետ ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. —(Առ Աղաբէգեանց էֆ.) Կարծեմ զայրանալու տեղի չկայ, Աղաբէգեանց էֆէնտի։ Որովհետեւ, ինչպէս որ Դիւանս թոյլ տուաւ Ձեզ ազատօրէն Ձեր քննադատութիւններն ընելու, նոյնպէս և Արշարունի Վարդապետ իրաւունք ունի նոյն ազատութեամբ պատասխանել Ձեր քննադատութեանց ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Աղաբէգեանց էֆէնտի՝ Եկեղեցական նուիրապետութեան մասին կերեւի թէ մասնաւոր հայեացք մ'ունի իրեն համար, բայց կարծեմ չկրցաւ իւր միտքը լաւ բացատրել. ուստի այդ մասին չխօսիմ ։ Իմ ընելիք դիտողութիւններս Եկեղեցականաց արժանեաց նկատմամբ է ։

Ես չեմ կրնար ընդունիլ թէ՝ մեր Եկեղեցականաց մէջ այսօր կը պակսին հմուտ և արժանաւոր Եկեղեցականք. քսան և հինգ տարիէ ի վեր կուսումնասիրեմ Ազգային կեանքը և գիտեմ որ Եկեղեցականք միշտ աշխատած են թէ՛ իրենք զիրենք զարգացնելու և թէ Ազգին անձնուիրաբար ծառայելու. եթէ գանգատելու բան մը կայ, այն այլ Ազգէն է, որ սկիզբէն ի վեր անտարբեր գտնուած է Եկեղեցականաց վիճակին բարւոքման մասին ։ Եկեղեցականք միշտ փոյթ ունեցած են ուսեալ և հմուտ Վարդապետներ հասցնելու համար ։ 1858ին աշխատեցան ժառանգաւորաց դպրոց մը հաստատելու. բայց խորհրդաւոր գործիչներ, արգելք յարուցին այս ձեռնարկութեան դէմ, ըսելով թէ՝ «Մենք ժառանգաւոր կուզեմք, բայց ժառանգաւորաց դպրոց չեմք ուզեր» ։ Լաւ Եկեղեցականներ հասցընելու մասին մինչեւ ցարդ միայն Եկեղեցականք են որ փոյթ ունեցած են, և ցաւալի է որ գաղտնի ձեռքեր ցարդ չեն դադրած առ այս արգելքներ յարուցանել։ Մեք փոխանակ երախտագէտ լինելու Եկեղեցականութեան՝ իւր բարի և ազգաչէն խորհրդոց և գործոց համար, անիրաւ խծբծանօք կը ջանանք վերաւորել Եկեղեցականները. բայց ի՞նչ իրաւամբ. — Նոքա ըսկիզբէն ի վեր՝ միայն իրենց պարտականութիւնը չլինելով հանդերձ՝ ջանադիր եղած են Եկեղեցականութիւնը բարձրացնելու, և ըրած են այնքան ինչ միայն, որքան միջոցներն և պարագաները ներած են իրենց ։ Ազգն ինք մանաւանդ պարտական է իւր Եկեղեցականները պատրաստել. պարտական է պատրաստել Քահանայներ՝ ընտանեաց համար, և Վարդապետներ՝ ժողովրդեան համար ։ Մեր ընտանիքներն հետզհետէ դէպ ի կործանումն դիմելու վրայ են՝ լաւ Քահանայներ չունենալնուս համար, և ժողովուրդը չքանալու վրայ է՝ Վարդապետներ չունենալուն համար ։ Ահա իբր օրինակ Ձեզ, Հնդկաստանը, որ վար-

դապետի մը երեսը տեսնելու, քարոզ մը լսելու, մխիթարուելու կարօտը կը քաշէ . . . :

ԳՈՒՐԳԷՆ Ց. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Լրագրէ մը տեղեկացայ թէ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսն եպիսկոպոս մը յղած է ի Կալկաթա քարոզչութեան համար :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով) Նմանապէս ուրիշ տեղեր. ժամանակին չհասցուցինք վարդապետներ, որպէս զի կորստեան վէճէն կարենայինք այժմ փրկել այդ երկրի Հայերն. ինչ որ ցանեցինք, ա՛յն կը քաղենք : Այժմ կը քաղէ Ազգն իւր անտարբերութեան պտուղը : Բաւէ՛, Հայոց Ազգ. քաւէ՛ մեղքերդ, թերեւս այդպէս զգաստանաս և սկսիս քիչ մ՚ալ քու ներկայիդ և ապագայիդ վրայ մտածել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէպէտ ժողովոյ փակման որոշեալ ժամն եկած հասած է, բայց Կրօն. ժողովոյ Ատենապետ Սրբազան խօսք կ՚ուզէ :

Արդ, կուզէ՞ ժողովդ այսօր իսկ լսել զՆորին Սրբազնութիւն, թէ չէ փակել ատեանն և վիճաբանութեան շարունակութիւնը թողուլ յառաջիկայ նստին :

ՁԱՅՆԵՐ. — Լսե՛նք Կրօն. ժողովոյ Ատենապետն ալ :

Հետեւաբար Ատենապետ էֆէնտի կը հրաւիրէ զՏէր Խորէն Սրբազան՝ իբր Ատենապետ Կրօն. ժողովոյ, խօսք առնուլ :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ—ՊԷՅ — (Ատենապետ Կրօն. ժողովոյ — (Բեմն ելնելով)

Տեա՛րք Երեսփոխանք, քառորդ մը դարէ ի վեր՝ Սահմանադրութիւնը օրէնք է ազգին, և ըստ այնմ՝ պարտի Կրօնական ժողովն իւր տարեկան համարատուութիւնը մատուցանել Ազգային ժողովոյ : Սակայն այս առաջին անգամն է որ պատկառելի ժողովդ անցեալ տարի ընտրած Կրօնական ժողովը՝ իւր պարտքը կատարելով, երբ միամեայ ընթացիցն ու գործոց համարը կուտայ, Ազգային Պատկառելի Ժողովդ՝ իւր քննադատութեանց առարկայ կընէ զայն : Իբրեւ Ատենապետ՝ կուզեմ նախ մատուցանել առ այս Կրօնական ժողովոյ գոհունակութեան լիուլի հաւաստիքը. զի նա սահմանադրական պարտաճանաչութեամբ՝ ինչպէս իւր համարատուութիւնը ներկայելու համարձակութիւնն ունեցաւ, նոյնպէս՝ նաեւ իւր բոլոր խորհրդոցն և գործոց պաշտպանութիւնն ընելու քաջութիւնն ունի. զի իւր բոլոր խորհուրդք և գործք՝ յօգուտ Ազգին և Եկեղեցւոյ են նուիրեալ :

Կրօն. ժողովոյ համարատուութեան վրայ Երեսփոխանք իրենց դիտողութիւններն յառաջ բերին, և անոնցմէ ոմանք՝ առիթ տուին ոչ սակաւ կծու և վիրաւորիչ ակնարկութիւններ ընել ընդհանուր եկեղեցականութեան վրայ : Պարտիմ նախ յայտարարել թէ, Կրօն. ժողովը թէեւ չկրցաւ ըմբռնել այդ յարձակմանց պատճառութիւնն և արդարութիւնը, բայց բնաւ չվշտացաւ. զի նա կը խորհի թէ վէրքը՝ եթէ կայ՝ բացուելու է որ կարենայ դարմանուիլ : Կրօն. ժողովը մինչեւ իսկ շնորհակալ է որ Երեսփոխան Տեարք համարձակ իրենց կարծիքներն յայտնեցին, զի ասով առիթ կուտան ինձ կարեւոր բացատրութիւնները տալու մի առ մի, որպէս զի համոզում գոյանայ՝ թէ Կրօն. ժողովն ըրած է ինչ որ կարելի էր ընել իւր սեղմեալ վիճակին մէջ :

Ինձ կը մնայ միայն փափաք մը յայտնել առաջի ժողովոյդ և կարծեմ թէ յոյժ իրաւացի փափաք, այն է՝ թէ քննադատութիւնք աւելի պատշաճ լեզուով մը տեղի ունենան, և չփորձուի աշխարհի առջեւ նշաւակ ընելու Հայ եկեղեցականութիւնը. զի այդ եղանակաւ ո՛չ թէ նա կը բարձրանայ, ինչպէս կը կարծեն ոմանք, այլ առաւել եւս կ՚ըստորնանայ ծաղր և ծանակ լինելով առաջի ներքնոց, և մանաւանդ՝ արտաքնոց :

կրօն. Ժողովէն գործ կը պահանջուի, բայց Ազգը պէտք է օգնէ իւր կրօնական Ժողովյն թէ՛ բարոյապէս և թէ՛ նիւթականապէս, որպէս զի և իրաւունք ունենայ պահանջել ի նմանէ առաւել գործ և առաւել արդիւնք։ Բայց երբ անտարբերութիւնը կը տիրէ յԱզգին, երբ կրօնական Ժողովն կը մնայ լքեալ, երբ իւր խորհուրդք և որոշմունք կը մնան անգործադրելիք, առ ի չգոյէ ազգային օժանդակութեան, միթէ իրաւո՞ւնք է ընդ վայր հարկանել զեկեղեցականութիւն. միթէ արդարութի՞ւն է ստգտանել զկրօնական Ժողովն թէ չէ գործած որչափ իրմէ կսպասուէր։

Ձեր կրօն. Ժողովը արդէն սկիզբէն ի վեր տեսնելով որ դանկ մը անգամ սնտուկին մէջ չէր նշանակուած իւր տրամադրութեան ներքեւ, Ազգ. Ժողովոյ մէջ յայտարարեց բացարձակապէս՝ թէ առանց դրամի ոչինչ չպիտի կարողանայ գործել։ Ազգ. Ժողովդ՝ ճանչցաւ կրօն. Ժողովոյ սոյն յայտարարութեան ո՛րքան իրաւացի լինելը. 25,000 դահեկանի վարկ մը քուէարկեց, որ պիտի դրուէր ընդ տրամադրութեամբ կրօն. Ժողովոյս։ Բայց ցաւելով կ՚ըսեմ, որ մէկ տարուան միջոցի մէջ՝ կրօն. Ժողովն մեծ և բազում դժուարութեամբք՝ հազիւ Ազգային արկղէն՝ կրցաւ հազար դահեկան ստանալ, այն ալ՝ Սէլանիկի անհովիւ Հայ գաղթականաց այցելու եկեղեցական մը ղրկելու առթիւ։ Սակայն կրօն. Ժողովը չկրցաւ Ազգ. արկղէն դրամ ստանալ որ Եանեայի մէջ անկնունք մնացած հայ երեխայից քահանայ մը ղրկէ ի մկրտութիւն։ Կրօն. Ժողովը չկրցաւ և ոչ մի նպաստ ընդունիլ յորմէ մատակարարէ հովուական այցելութեանց ծախքն, և կրօնական քննչաց՝ թէ ոչ աշխատանաց փոխարինութեան, գէթ՝ տեղափոխական ծախքը կարենայ հայթհայթել։ Եւ դուք՝ ո՛րքան խստապահանջ կը լինի՛ք Ձեր կրօնական Ժողովէն, երբ ընաւ հոգ չէք տանիր որ Ձեր քուէարկեալ 25.000 դահեկան փոքրիկ գումարն անգամ նա գէթ ստանայ։ Հազար դահեկա՛ն միայն նա հազիւ կրնայ ձեռք բերել, և իրմէն՝ հարիւր հազարներու արդիւնք կը պահանջուի՛։ Միթէ արդարութի՞ւն է այս։

Նիւթական դժուարութեանց վրայ՝ պէտք է յաւելուլ նաեւ ուրիշ ոչ նուազ մեծ դժուարութիւն մը առաջի կրօնական Ժողովոյս. այն է՝ վերջին տարւոյ մէջ Պատրիարքական Աթոռոյն թափուր վիճակը։ Գիտէք, Տեարք, որ Ժողովոց աշխատութիւնք և որոշմունք գրեթէ միշտ ապարդիւն կը մնան, երբ գործադիր Իշխանութիւն չկայ, զի Նա է որ պիտի գործադրէ զանոնք, և մարմին պիտի տայ Ժողովոյն խորհրդոյն և որոշմանց։ Արդ, մէկ կողմէ դրամի չգոյութիւնն, և միւս կողմէ Գործադիր Իշխանութեան բացակայութիւնն՝ կաշկանդած էին Ձեր կրօն. Ժողովն, որ ինչպէս քաջ գիտէք՝ գործելու անհո՛ւն եռանդով մը սկսած էր իւր պաշտօնին։

Այժմ որ ունինք Պատրիարքական Գործադիր իշխանութիւն, եթէ յառաջիկայ շըրջանին մէջ չզլացուի մեզ գոնէ 25,000ի որոշեալ փոքրիկ վարկը, կրօն. Ժողովն այժմէն կը յայտարարէ թէ, պիտի կարողանայ շատ աւելի գործեր կատարել. և յաւարտ իւր երկամեայ շրջանին՝ առաւել գոհացուցիչ համարատուութեամբ մը ներկայանալ յառաջեան Ազգային պատկառելի Ժողովոյ։

Իսկ եթէ և յերկրորդումն՝ զլացուի Ժողովոյս զինչ որ զլացուեցաւ յառաջնումն ամի, կը յայտարարեմ այժմէն պաշտօնապէս՝ թէ ո՛չ Ազգն և ոչ նորա Երեսփոխանական Ժողով չպիտի ունենան իրաւունք սպասել ի Կրօնական Ժողովէն ոչ առաւել հանրային գործ և ոչ արդիւնք։ Ի՞նչ է 25,000 քուէարկեալ դահեկանն՝ Թուրքիոյ երեք միլիոն Հայոց կրօնական անբաւ պիտոյից մատակարարութեանն առջեւ։ Բայց եթէ և սոյն աննշան գումարն չշնորհուի մեզ՝ ինչպէս չշնորհուեցաւ Ժողովոյս 1884–1885 շրջանին մէջ, և կրօն. Ժողովն Ազգ. կեդրոնական Վարչութեան դատապարտուի յանգործութիւն, արդարութիւն չէ որ պատասխանատուութիւնը ծանրանայ կրօն. Ժողովոյն վրայ։ Թո՛ղ Երեսփոխանութիւնն ունենայ ոյժ և հաստատութիւն իւր քուէարկեալ վարկն դնելու կրօնական Ժողովոյ տրա-

մադրութեան ներքեւ, որպէս զի և ունենայ յետոյ իրաւունք՝ համեմատաբար գործ և արդիւնք պահանջելու ի նմանէ ։

Սոյն հանդիսաւոր յայտարարութիւնն ընելով յանուն Կրօնական Ժողովոյ Ազգ. Կեդրոնական Վարչութեան, այժմ կանչնիմ պատասխանել Համարատուութեան այն գլխաւոր կէտերուն՝ որք երեսփոխանաց ոմանց քննադատութեանց առարկայ եղան ։

Իմ ազնիւ բարեկամ Թիրեաքեան էֆէնտի, որում հետեւեցան ի ձէնջ և այլք, քննադատելով Համարատուութեան այն պարբերութիւնն որ կըսէ. «ըստ բնական օրինի և սովորութեան պէտք էր որ Պատրիարքական Տեղապահ ընտրուէր մի եպիսկոպոս» կարծիք յայտնեց թէ վարդապետք ևս կարող են Տեղապահ ընտրուիլ ։ Այս կարծիք շատ սխալ է. Պատրիարքական Աթոռն Արքեպիսկոպոսական բարձր Աթոռ է, Թուրքիոյ համայն եպիսկոպոսաց Դէտին Աթոռն է այն ։ Ուստի և ըստ օրինաց Եկեղեցւոյ՝ այդ Աթոռոյն Տեղապահն ալ՝ միայն եպիսկոպոս մը կարող է լինել, ըստ որում պիտի նախագահէ եպիսկոպոսաց ։ Բնաւ տեսնուած չէ որ օրինաւորութեան ժամանակ՝ վարդապետ մը պահպանէ զՊատրիարքական Գահը Տեղապահի պաշտօնով ։

Ըսին ոմանք թէ Հոգելոյս Իգնատիոս Պատրիարքի ընտրութեան ժամանակ՝ Կարապետ վարդապետ Սերովբեան Տեղապահ կարգուած է ։ Պատմական սխալ է այդ ։ Կարապետ Վարդապետ՝ յայնժամ Պատրիարքական Փոխանորդ էր, և որովհետև յետ հրաժարման Հոգելոյս Արիստակէս Արքեպիսկոպոսի ի Տեղապահական պաշտօնէ՝ խիստ կարճ միջոցի մէջ պիտի կատարուէր Պատրիարքական ընտրութիւնը՝ հրամանաւ Պետութեան, հարկ չըտեսնուեցաւ Տեղապահի ընտրութեան, և բաւ համարուեցաւ Փոխանորդ վարդապետին հըսկողութեամբ կատարել Պատրիարքական ընտրութեան վերաբերեալ ընտրական գործողութիւնքն ։ Բ. Դուռն ալ՝ որոյ ղեկավարն էր յայնժամ անմոռանալին Ալի բաշա, ընդունուեցաւ Պատրիարքարանի այս կարգադրութիւնն ։ Այն ժամանակի Ազգային Վարչութեանն ևս պատիւ ունէի անդամ լինել և ես, և կը խօսիմ ոչ միայն իբրեւ ականատես վկայ, այլ և Պատրիարքարանի արձանագրութիւններըն ևս կը բերեմ ձեզ վկայ, զորս քննեց Խառն Ժողովն վերջին Տեղապահական խընդրոյն առթիւ ։ Նորա հաստատուցանեն ոչ միայն թէ Կարապետ վարդապետ չդրուեցաւ Տեղապահ, այլ նաեւ թէ Տեղապահք՝ միշտ եպիսկոպոսներէ եղած են ։ Ստեփաննոս եպիսկոպոս, Արիստակէս եպիսկոպոս, Նիկողոս եպիսկոպոս, Ներսէս եպիսկոպոս՝ ահա չորս տեղապահներ, զորս ունեցած եմք Սահմանադրութեան օրով. և ամենքն ալ՝ եպիսկոպոսունք էին ։ Տեղապահի պաշտօնը Սահմանադրութիւնն է որ ստեղծած է Կ. Պոլսոյ Աթոռոյն համար ։ Եւ Սահմանադրութեան հեղինակքն՝ որ Վարչութեան անդամակցութեան մասնակցած և կատարած են հետզհետէ սոյն չորս տեղապահական ընտրութիւնները, միշտ եպիսկոպոս մը բազմեցուցած են յայն Աթոռ ։

Եթէ այս մասին օրինաց մէջ բացորոշ տրամադրութեան մը չգտնուելէն՝ Թիրեաքեան էֆէնտի կուզէ հետեւցնել թէ վարդապետք ևս կարող են Տեղապահ լինիլ, նոյնպէս կարելի է հետեւցնել թէ աշխարհականք եւս կրնան տեղապահ լինիլ ։ Բայց ո՛չ այսպէս և ո՛չ այնպէս մեկնեցին հեղինակքն Սահմանադրութեան, նորա տրամադրութիւնը, այլ ինչպէս ըսի՝ միշտ եպիսկոպոս մը անուանեցին տեղապահ Պատրիարքական Աթոռոյն՝ երբ այն թափուր մնաց ։ Թո՛ղ եկեղեցական օրէնքը որ եպիսկոպոսաց նախագահն պէտք է և ինքն եպիսկոպոս լինի, ահա և սովորութիւնը մեզ կը ցուցընէ թէ՝ Տեղապահը պետք է եպիսկոպոսաց դասէն ընտրուի . և սովորութիւնը հիննալով՝ օրէնք կը դառնայ ։ Արդ, որովհետեւ մեր նախորդք՝ հետեւելով օրինաց և սովորութեան՝ միշտ եպիսկոպոսները կարգած են Տեղապահ, մեք ևս պարտաւոր եմք նոյնպէս օրէնքն յարգել և գործադրել ։

Բայց պիտի հարցուի՝ թէ այս վերջին անգամ ինչո՞ւ Վարչութիւնը վարդապետ մը կարգեց Տեղապահ ։ — Նախ կը պատասխանեմ որ այդ տնօրինութիւն՝ Խառն Ժողովոյ կը

պատկանի, և ո՛չ կրօնականին. ուստի այս մասին եթէ քննադատութեան տեղի կայ, պէտք է Խառն Ժողովոյ ուղղել զայն և ո՛չ Կրօն. Ժողովոյ: Երրորդ՝ թէև Խառն Ժողովոյ կողմէ պաշտօն չունիմ այս մասին բացատրութիւն տալու, բայց իբրև նորա Ատենապետաց մին՝ այսքանը գիտեմ թէ ի՞նչ էր սոյն ընտրութեան սկզբնառիթը, ուստի և կարող եմ համառօտիւ տալ տեղեկութիւն:

Յետ վախճանելոյ Հոգելոյս Ներսէս Պատրիարքի՝ Ազգային Ժողովք 40 օր սգոյ նուիրեց, և որոշեց որ ի լրմանն՝ անմիջապէս կատարէ ընտրութիւն նորոյ Պատրիարքի: Ազգային Ժողովոյ սոյն որոշման տեղեկանալով Խառն Ժողովն, ըստ առաջարկութեան Քաղաքականին՝ չկամեցաւ այսքան կարճ միջոցի համար՝ Տեղապահի ընտրութեան գործադրութեամբ ժամանակ անցընել, այլ որոշեց որ Հոգելոյս Իգնատիոս Պատրիարքի ընտրութենէ առաջ եղած վարչական տնօրէնութեան նմանելով՝ շատանալ Պատրիարքական փոխանորդով. և ըստ այսմ ալ տեղեկագրեց Պետութեան: Բայց Բ. Դուռն չընդունեցաւ սոյն բացառիկ տնօրէնութիւնն, և պէտք է ըսել թէ իրաւունք ունէր ըստ Սահմանադրութեան: Խառն Ժողովն պարտաւորեցաւ յայնժամ օրէնքը գործադրել: Փափուկ պարագայ մը եկած էր իւր առաջ. զՓոխանորդ վարդապետն յիշելով իւր թագրիրին մէջ՝ ըսած էր՝ թէ նմա յանձնած էր առաջիկայ կարճ միջոցի մէջ Պատրիարքի ընտրութեան գործողութեանց հսկելու պաշտօնը. բայց առանց Տեղապահ անունը կրելու: Այժմ որ Բ. Դուռն կը պահանջէր որ ըստ օրինաց Սահմանադրութեան Տեղապահ մը ընտրուի և իրեն ներկայացուի, Քաղաքական Ժողովը խնդրեց Կրօնականէն, որ սոյն փափուկ պարագային մէջ՝ իրեն համակերպելով, փոխանորդ վարդապետին տրուի Տեղապահ անունը, նախ՝ որպէս զի փոխանորդ վարդապետին արժանեացը վրայ կասկած մը յարուցանելու տեղի տրուած չլինի Պետութեան առջև, եպիսկոպոս մը առաջարկելով ի Տեղապահական պաշտօն, որով հարկ պիտի լինէր բացատրութեանց մէջ մտնել, համոզելու համար վարդապետի և եպիսկոպոսի տարբերութիւնքն ըստ քրիստոնէական եկեղեցւոյ և օրինաց: Երկրորդ, մէկ երկու շաբթուան պաշտօն կը համարուէր այդ. ըստ որում կը յուսացուէր թէ Բ. Դուռն անմիջապէս հաստատելով զՏեղապահն, պիտի հրամայէր որ Պատրիարքի ընտրութեան գործը կատարուի իսկոյն. Կրօնական Ժողովն՝ սոյն նկատմանց առջև՝ իւր հաւանութիւնը տուաւ, սակայն հետևեալ պայմաններով. Նախ՝ որ կատարուի անյապաղ ընտրութիւնն Պատրիարքի, որոյ կարևորութիւնը կը զգայուէր համայն Ազգէն: Երկրորդ՝ որ Տեղապահի անուն ընդունող վարդապետը՝ թէև գտնուի Ազգային Ժողովոյ մէջ, ի տեղեկութիւն որոշմանց, այլ չնախագահէ նոյա, ըստ որում եպիսկոպոսունք կան այն Ժողովոյ մէջ, և վարդապետ մը չէ կարող վերագոյն և նախագահական աթոռը բազմիլ ի ներկայութեան անդ եպիսկոպոսաց. Երրորդ՝ վարդապետի մը Տեղապահ ընտրուիլն՝ օրինաց և սովորութեան կարգ չանցնի, այլ նկատուի իբրև բացառիկ մի տնօրէնութիւն ի ստիպմանէ պարագայից եղեալ. և այսպէս ևս բացորոշակի նշանակուի յԱրձանագրութեան անդ: Խառն Ժողովն կատարելապէս օրինաւոր գտնելով Կրօնական Ժողովոյ սոյն պայմանները՝ ընդունեցաւ, և տուաւ զայնս արձանագրել, ի գիտութիւն ապագային:

Ահա այս է բացատրութիւն՝ Համարատուութեան «ընդ ինչ ինչ պայմանօք» նշանաւոր խօսքին, և որոյ վրայ կը զարմանամ որ ո՛չ ոք չհարցուց մեկնութիւն, թէև շատ մանր կէտերու վրայ՝ հաճեցան ոմանք ընել կերպ կերպ դիտողութիւններ և հարցումներ, որոց կարևորութիւնն և իրաւացի լինելը կրնայ տարակուսական լինիլ: Սոյն բացատրութիւնք անտարակոյս պիտի կարենան համոզել զԹիւրեաքեան էֆէնտի՝ որոյ անկողմնակալութիւնը կը ճանչեմ, թէ մեք բնաւ դիտաւորութիւն չունինք «սքօղել խորհուրդները», ինչպէս ինքն կը կարծէ:

Հոս տեղն է ըսելու որ լրագիրք ոմանք, և մինչև անգամ ատենագրութիւնք Ազգային

ժողովոյ՝ անուշադրութեամբ՝ քանի մը երեսփոխանական նիստերու համար ըսած են թէ գումարուած են «ընդ նախագահութեամբ Պատրիարքական Տեղապահին»։ Ներկայ չեմ գտնուած այն նիստերուն. բայց գիտեմ որ ներկայ գտնուած են անդ այլ եպիսկոպոսունք. ուրեմն կարելի չէր և չէ ըստ եկեղեցական օրինաց, որ վարդապետ մը, ինչ տիտղոս ալ ունենայ՝ նախագահէ քան զինքն բարձրագոյն աստիճան ունեցողաց, որ են եպիսկոպոսունք, ինչպէս որ բացատրեցի քիչ մը առաջ։

Կը յուսամ թէ կարող եղայ բաւականապէս հասկցնել որ եթէ յիշեալ բացառիկ պարագաները և Կրօնական ժողովոյ դրած պայմանները չլինէին, անշուշտ՝ «բնական օրինօք» եպիսկոպոս մը պէտք էր ընտրուէր Տեղապահ, և Թիրեաքեան էֆէնտի շատ լաւ կը հասկնայ թէ՝ Համբաւատուութեան մէջ «բնական օրինօք» ըսուածը «եկեղեցական բնական օրինօք» կը նշանակէ։ Բայց Կրօնական ժողովոյ Համբաւատուութիւնը խմբագրել կուզուէր, ուստի խմբագրուեցաւ և այս ամենապարզ և մեկնութեան կարօտ չեղող խօսքն անգամ։ Բարեբաղդաբար Համբաւատուութեան մէջ չկան տպագրական թերութիւնք և սխալներ, ապա թէ ոչ՝ և նոքա իսկ բծախնդիր քննադատից ձեռքը փաստեր պիտի նկատուէին անշուշտ Կրօն. ժողովոյ դէմ։ Բայց Թիրեաքեան էֆէնտի պատուել զմեզ կուզէ՝ երբ Կրօնական ժողովոյ միամեայ կեանք և մէկ նստերուն ըրած աշխատանաց և որոշմանց մէջ՝ կը գտնէ դէթ մի քանի տնօրինութիւն՝ զորս գովութեան արժանի կը համարի, ինչպէս է՝ եկեղեցական հնութեանց և նուիրական յիշատակաց համար արձակած շրջաբերականը։ Սակայն Կրօնական ժողովը որ գիտէ իւր պարտքը, և կը ջանայ կատարել զայն՝ յօգուտ Ազգի և Եկեղեցւոյ, չսպասեր գովեստի, այլ կսպասէ որ իւր որոշմունքն և հրամանք ընդունուին և գործադրուին յորոց անկ է։ Կրօնական ժողովը գիտակցութիւն ունի որ միայն յիշեալ որոշումն և հրամանն չէ՛ որ տնօրինուած է հեռատեսութեամբ, ազգասիրութեամբ և Հայաստանեայց Եկեղեցւոյ օգտաճանաչութեամբ։ Անկողմնակալ մտքեր՝ կարծեմ թէ իրաւունք կուտան իմ այս խօսքին։

Փափազեան Ստեփան էֆէնտի ճանաչելով հանդերձ Կրօնական ժողովոյ Համբաւատուութեան նշանակութիւնը, Ազգային ժողովոյդ գրեթէ ներողութիւնն հայցեց նորա համար, որպէս զի Կրօնական ժողովք չխօսէին այսուհետեւ իւրեանց Համբաւատուութիւնն ընելէ։ Բարեսիրական զգացումը՝ գնահատելի է արդարեւ, բայց և պէտք չէ որ այնպէս իմն կարծուի թէ Կրօնական ժողովը պէտք ունի միջնորդութեան որ խոստութեամբ չնայուի իւր Համբաւատուութեան և գործոյը վրայ։ Ո՛չ, միջնորդութիւն չեմք ուզեր, այլ՝ արդարասիրութիւն։ Մենք բացատրած եմք՝ բաւական ընդունելի փաստերով՝ թէ ինչո՞ւ համար չեմք գործած աւելի քան զոր կը փափաքէինք, բայց և համոզուած եմք թէ գործած եմք ինչ որ կարելին էր գործել, մեր յիշած արգելքներու և դժուարութեանց առջեւ։ Սակայն մեր Համբաւատուութեան մէջ այն բացատրութիւնքն ներկայացնող յառաջաբանն և վերջաբանն՝ հարեւանցի ընթերցուելով, ըսուեցաւ թէ Համբաւատուութիւնը երկար յառաջաբան և վերջաբան ունի. և թէ՝ կարճառօտ է Կրօնական ժողովոյ մատուցած Համբաւատուութիւնը։ Իբրու թէ՝ նորա յառաջաբանն և վերջաբան՝ չունէին զիւրեանց նշանակութիւն, չպարունակէին շատ մը ճշմարտութիւն, և իբր թէ Համբաւատուութիւն մը յայնժամ եւեթ նշանաւոր լինէր և ընդունելի, երբ գրուած լինէր երկար և ճապաղ ոճով, և կազմէր 4—500 էջերէ բաղկացեալ ստուար հատոր մը։

Կրօնական ժողովն ըսած է իւր Համբաւատուութեան մէջ՝ թէ «ամուսնական խնդիրք զուրկ են յընդհանուր նշանակութենէ և ի կարեւորութենէ. Կրօնական ժողովս՝ ըստ նախորդաց իւրոյ արժան չդատեր հանել զայնս ի հրապարակ»։ Մեր քննադատք՝ որդի Կրօն. ժողովոյ և նախորդացն համաձայն չեն մտածեր, նոքա կը պահանջեն որ ամուսնական խնդիրքն ևս ի հրապարակ հանուին, որպէս զի, կ՚ըսէ Փափազեան էֆէնտի, Ազգը գիտ-

նայ իւր ընտանեկան վիճակը, և ըստ այնմ նորա դարմանը մտածէ, և որպէս զի հրատարակութեան երկիւղիւ զգաստանան ընտանեկան սրբութեան դրժողք։ — Սակայն Կրօնական Ժողովն այսպէս համոզուած չէ։ Եթէ սոյն դռները բաց լինէին միայն երեսփոխանաց համար, եթէ Ազգային Ժողովոյ մատուցեալ Համարատուութիւնը և յատենի եղեալ դիտողութիւնք և վճարանութիւնք՝ Ժողովոյս որմերուն ներքև մնային, և արձագանգ չգըտնէին ոչ միայն յընդհանուր Ազգին, այլ որ ցաւալին է և խիթալի՝ օտար ազգաց մէջ անգամ, դուցէ ոմանք իրաւացի համարէին թէ ամուսնական խնդրոց համարատուութիւնն կարենար ունենալ իւր բաղձացեալ օգուտներն։ Կրօնական Ժողովն ոչ միայն այն մակամտածեալ օգուտները չտեսներ, այլ և ընդհակառակն յոյժ մեծ վնաս կը տեսնէ ամուսնական խնդրոց հրատարակման մէջ։ Ահա յներայս հրապարակագոյժ կը լինին ընտանեկան յանցանք և ոճիրք։ Մի թէ այնու սա՞նձ կը դըրուի ամուսնական յարկին սրբութիւնն առնակոխ ընող ոճրագործաց։ Ո՛չ, Կրօնական Ժողովն չկրնար ամուսնական վէճերն և խնդիրները բերել ի հրապարակ, զի նոքա Հայ ընտանեաց գաղտնիքն են, զի այն գաղտնեաց մերկացումը՝ վնասակար է յոյժ թէ՛ յանցաւորաց, թէ՛ նոյա զաւակաց ապագային և թէ՛ նոյա պարագայից պատուոյն։ Ամուսնական խնդիրք՝ խոստովանութիւններ են, և կը մնան, և պէտք է մնան խոստովանութեան կնքոյ ներքև։ Ո՛չ․ ձեր և ոչ մի քննադատութիւն, ձեր և ո՛չ մի պահանջումն, և աւելին ըսեմ, ձեր և ոչ մի որոշումն՝ կարող են ներգործել Կրօնական Ժողովոյ վրայ, որ ամուսնական խնդրոց գաղտնիքը՝ հոլանէ մերկապարանոց հասարակաց հետաքրքիր աչքերուն առջեւ։

Սակայն Փափազեան Ստեփան էֆէնտիի առաջարկութեան երկրորդ մասը՝ որ է վիճակագրական տեղեկութիւն մը տալ ընդհանուր կերպով՝ տարւոյն մէջ ներկայացեալ ամուսնական խնդրոց թուոյն և բնութեանը վրայ, Կրօնական Ժողովը բանաւոր կը դատէ զայդ, և ընդունելով մտադիր, կը խոստանայ որ իւր երկրորդ Համարատուութեան մէջ հաղորդէ Ժողովոյդ զայն վիճակագիր։

Գալով Հաճնոյ ամուսնական խնդրոյն, շատ ցաւալի է որ այս մասնաւոր խնդիրը յուզուեցաւ հրապարակի վրայ, և այսօր իսկ իբրև մի մեծ խնդիր երկրորդ անգամ կը ներկայանայ յատեան Ազգային Ժողովոյս։

Կ՚առարկուի թէ Կրօն. Ժողովն անփոյթ մնացած է խնդիրն ուղղակի քննելու և յանցաւորները պատժելու։ Այս կարծիքը ունեցողները չարաչար կը սխալին, զի չգիտեն թէ թէպէտև Կրօնական Ժողովոյ իրաւասութեան սահմանը կը տարածուի, ըստ Սահմանադրութեան, համայն Թուրքիոյ Հայոց վրայ, այլ սոյն իրաւասութիւն՝ ընդհանրական խնդրոց համար է․ մինչդեռ տեղական և մասնաւոր խնդրոց ուղղակի իրաւասութիւնը՝ իրեն չվերաբերիր, երբ այն խնդիրք՝ Կիլիկիոյ, Աղթամարայ և Երուսաղիմայ թեմերուն մէջ տեղի ունեցած են։ Այսպէս կը վճռեն եկեղեցական կանոնք։ Արդ Հաճնի՝ ուր կատարուած է այն հռչակաւոր դարձած ամուսնութիւնը, Կիլիկիոյ Կաթողիկոսական իշխանութեան ներքև է․ ուրեմն անկէ միայն պէտք էր որ սպասուէր քննութիւն եղելութեան, և յանցաւորին՝ եթէ կար՝ պատժուիլը։ Այսու հանդերձ, Կրօն. Ժողովն ըրաւ ինչ որ կարող էր ի քննութիւն խնդրոյն և ի բարձումն դայթակղութեան։ Նախ, ինչպէս գիտէք, այս բանի համարուած ամուսնութեան նողկալի նըկարագրութիւնն, — որոյ մէջ ամենագարշելի դեր մը ընծայուած էր Հայ եպիսկոպոսի մը —, առաջին անգամ մանրամասնօրէն հրատարակուեցաւ Արեւելք լրագրոյ մէջ, և արձագանգ գտնելով օտար թերթերու մէջ, ընդհանուր Հայ եկեղեցականութեան պատւոյն արատաբեր եղաւ յանիրաւի։

Ազգային Ժողովոյ մէջ առաջին անգամ սոյն խնդիրը յուզողն եղաւ Արեւելքի Վարչական խորհրդոյ Ատենապետ՝ Սըվաճեան Կարապետ էֆէնտին։ Կրօն. Ժողովը, ըստ որոշման Պատկ. Ազգային Ժողովոյդ, փութաց յայնժամ պաշտօնագրով հաղորդել Նմա զոր

ինչ ըրած էր մինչեւ ցայն վայր սոյն խնդրոյն նկատմամբ ։ Եւ այժմ, իւր Համարատուութեան մէջ զետեղած է այս մասին եղեալ պաշտօնական թղթակցութիւնքն ընդ մէջ կրօնական ժողովոյ և Կիլիկիոյ Ամենապատիւ Ս. Կաթողիկոսին ։ Անդ բացորոշ կերեւի թէ Արեւելքի հրատարակութիւնք հեռի են ճշմարտութիւն լինելէ ։

Այսօր, մեր Պատ. պաշտօնակից Արփիարեան Էֆէնտի ուզելով արդարացնել այս խնդրոյս մէջ Արեւելքի բռնած ընթացքն, կըսէ թէ կրօն. ժողովը արդարութիւնը յերեւան հանելու և եկեղեցականութեան պատիւը պաշտպանելու ինչո՞ւ հետամուտ չեղաւ ։ Եւ կը հետեւցնէ՝ թէ Հաճնոյ ամուսնական խնդիրը իւր ամբողջութեանը մէջ ստոյգ լինելու է որ ձեռնհաս իշխանութիւնք քննութենէ և դատէ խոյս տուին ։ — Շատ սխալ է սոյն ենթադրութիւն, մանաւանդ թէ՝ յոյժ անիրաւ ։ Կրօնական ժողովս ոչ միայն հոգածութիւն ունեցաւ սոյն խնդրոյ հանգամանայն վերահասու լինել, այլ և, ինչպէս կը տեսնէք իւր Համարատուութեան մէջ, գրեց առ Ս. Կաթողիկոսն Կիլիկիոյ մի պաշտօնագիր յորում կըսէր. « Հարկ ի վերայ կայ կատարել մի անաչառ քննութիւն, որպէս զի ճշմարտութիւնն յերեւան գայ, և յանցաւորք յայտնըւին առաջի Պետութեան և առաջի համօրէն Ազգին, որպէս և առաջի ատենի հանրային կարծեաց » ։ Եւ ոչ այսչափ միայն՝ այլ և կը յաւելուր հետեւեալ նշանաւոր տողերը. «Ձեր Ամեն. Սրբազնութեան արդարասիրութիւնն և նախանձախնդրութիւնն պատուոյ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ առաւել պէտք փայլին սոյն առթիւ, անարժան և պարտազանց եկեղեցականաց՝ եթէ կան երբէք սոյն խնդրոյ մէջ, տալով արժանաւոր և օրինակելի պատիժն, որպէս զի չկարծուի թէ Հայ եկեղեցականութիւնն համերաշխութիւն ունի այնպիսի եկեղեցականաց հետ՝ որք կը յանդգնին պսակ դնել բռնաբար, և հռչակուի ի սփիւռս աշխարհի թէ Հայաստանեայց Առաքելական և Ուղղափառ Ս. Եկեղեցին չընդունիր բնաւ երբէք զայն պսակադրութիւն որ կատարուած է բռնի, և պատժոյ կը դատապարտէ զպսակադիրսն ոյք և իցեն ։

Սոյն պաշտօնագրութիւն՝ շա՛տ իսկ է յապացուցանել թէ Կրօնական ժողովս անկեղծօրէն փափաքեցաւ, նախ՝ որ քննութիւն կատարուի. և երկրորդ՝ որ յանցաւորքն պատժուին ։ — Ի՞նչ ըրաւ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը. պահանջեալ քննութիւնը կատարելով տեղեկագրեց, և հաստատելով որ Հաճնոյ մէջ կատարուած ամուսնութիւնը բնաւ բռնի եղած չէ, և թէ բնաւ տեղի ունեցած չեն այն անտեղի գործողութիւնք զորս, կըսէր, «կը յանդգնին յերիւրել ոմանք խմբագիրք » կը յաւելու. « Իսկ գալով Եպիսկոպոսի, զորմէ ծանրագոյնս և լրբագոյնս կը զրաբանեն, ո՛չ պսակին և ո՛չ ալ առագաստին ներկայ չըլլալը կը յայտնուի առ մեզ ուղղուած տեղեկագրէն ։ Ուստի պարտ և արժան է որ անպատճառ ազգային անաչառ Ատեանդ, և մանաւանդ՝ Կրօնական ժողովդ՝ չէ թէ անձի, այլ Ս. Կրօնի նախանձախնդրութեամբ անհրաժեշտ կերպով քննէ, դանէ և ըստ արժանւոյն պատժէ պչարալեզու զրպարտիչսն զայնոսիկ ըստ հոգեւոր և մարմնաւոր օրինաց ի պաշտպանութիւն պատուոյ ընդհանուր հայ կղերականութեան, հրապարակելով միանգամայն զարդիւնսն նոյն իսկ արդարադատութեամբ » ։

Կը տեսնէք, Տեարք, որ ձեռնհաս իշխանութիւնք ոչ քննութենէ խոյս տուին և ոչ դատէ, ինչպէս ի զուր կը կարծէ Արփիար Էֆէնտի ։ Կրօնական ժողովս՝ ըստ արդար առաջարկութեան Ամենապատիւ Կաթողիկոսի Տանն Կիլիկիոյ փութացաւ բանալ մի քննութիւն դտնելու համար թէ ո՞յք էին այն «չարալեզու զրպարտիչքն » որոց համար Նորին Ամեն. Սրբազնութիւնը կը պահանջէր հոգեւոր և մարմնաւոր օրինաց պատիժները ։ Սոյն նպատակին հասնելու համար՝ հրաւիրեց ի ձեռն փոխանորդ Ս. Հօր՝ Արեւելքի վարչական պատասխանատու Խորհուրդն՝ ի բացատրութիւն ։ Արեւելքի կողմէ ներկայացաւ Սրվանձեան Կարապետ Էֆէնտի, որում Գեր. փոխանորդն յայտ-

նեց յանուն և ի դիմաց կրօնական ժողովոյ թէ Ամեն. Տ. Մկրտիչ Կաթողիկոսի պահանջմամբ՝ քննութիւն տեղի պիտի ունենայ Հաճնոյ պատկադրութեան վրայ հրատարակեալ գրութեանց մասին, ուստի կրօնական ժողովը կը հրաւիրէ զխմբագրութիւն Արեւելք լրագրոյ որ նոյն հրատարակութեանց հեղինակներն ցոյց տրուին, այս թէ ոչ՝ Արեւելքի խմբագրութիւնն պիտի համարուի ըստ օրինի պատասխանատու նոյն հրատարակութեանց ։ Սըրվաճեան էֆէնտի պատասխանած է թէ Արեւելքի Տնօրէն Խորհրդոյ և կամ Արտօնատէր Տամատեան էֆէնտիի հետ խօսելէ յետոյ միայն կրնայ այս մասին պատասխան բերել ։ Անցան վեց եօթը ամիսներ, և տակաւին կրօնական ժողովն կը սպասէ ցարդ որ Սըրվաճեան էֆ. բերէ իւր խոստացած պատասխանը, որպէս զի և կրօնական ժողովը կարենայ . . . . .

ՀԱՃԵԱՆ Յ. ԷՖ. — (Ընդմիջմամբ) Կրօն. ժողովը կարծեմ կրնար երկրորդել իւր հրաւէրն ։

Տ. Խ. ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ—ՊԷՅ — (Պատասխանելով) Այո՛, կրնար, բայց ի՞նչ հարկ կար, քանի որ Սըրվաճեան էֆէնտի խօսք տըւած էր պատասխան բերելու ։ Միթէ խոստում մը ա՞յն ժամանակ միայն պէտք է կատարել երբ հրաւէրն երկրորդո՞ւի ։

ՀԱՃԵԱՆ Յ. ԷՖ. — (Վերստին ընդմիջելով) Բայց այս խնդրոյ մէջ կրօնական ժողովոյ պարտքն էր երկրորդել իւր հրաւէրն, քանի որ Հայ եպիսկոպոսի մը պատիւն խնդրոյ ներքեւ էր ։

Տ. Խ. ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ—ՊԷՅ. — Կրօն. ժողովն իւր հրաւէրն չուզեց երկրորդել, կարծելով թէ քանի որ խնդիրն Արեւելքի պէս թերթէ մը ծագում առած էր, և որ այնքան չնչին հանած էր ի լոյս աշխարհի, մինչեւ անգամ յայտարարելով որ ամեն զոհողութիւն յանձն առած է որպէս զի յերեւան հանէ ճշմարտութիւն, երբ ահա իւր փափաքին կը հասնէր, ձեռնհաս իշխանութիւնք զնա կը հրաւէին ի յայտնութիւն ճշմարտութեան, նա քաջութիւն պիտի ունենար անմիջապէս պատասխանելու եղեալ հրաւէրին, և դատն մինչեւ ցայժմ աւարտած կը լինէր, և աշխարհ իմացած կը լինէր թէ Արեւելքի ամբաստանած եկեղեցակա՞նքն են յանցաւոր, թէ նոցա զրպարտիչքն ։ — Արդ կը հարցնեմ թէ ո՞վ է քննութենէ և դատէ խոյս տուողը. ձեռընհա՞ս իշխանութիւնքն, թէ մանաւանդ՝ Արեւելքի պատուարժան խմբագրութիւնը ։

Այսպէս է, Տեարք, լրագրոյ ոմանց ազգասիրական սովորութիւնը. գրել և հրատարակել եկեղեցականաց դէմ ինչ որ կը լսեն կամ կը կարծեն գիտնալ. բաւական է որ եկեղեցականք զրպարտուին և անուանարկուին իրենց թերթով ։ Բայց երբ ի դատ հրաւիրուին՝ իրենց զրպարտութիւնքն հաստատելու, յայնժամ այն ազգասէր խմբագրապետք կամ չեն գար, և կամ փախուստ կուտան այլ ընդ այլոյ ճանապարհներով. գիտնալով քաջ՝ թէ կրօնական իշխանութիւնը չունի ստիպաններ որ բռնի բերէ զնոսա ի դատաստան ։ Այսպէս ըրաւ վերջերս, և Փունջ լրագրի խմբագրապետ Ալաճաճեան էֆէնտին, երբ Կրօնական ժողովոյ կողմէն երիցս և չորիցս յատեան կանչուեցաւ բարձրաստիճան եկեղեցականի մը դէմ ըրած զրպարտութիւններն հաստատելու ։ Բայց նա՝ երիցս և չորիցս խոյս տուաւ սնոտի պատճառներով. զի խմբագրի մը համար առաւել դիւրին է զրպարտելն՝ քան հաստատել՝ ըրած անխիղճ զրպարտութիւններն ։

Ես՝ իմ կողմանէ՝ կը ներեմ ոչ միայն այն վերջին զրպարտութեանց, այլ նաեւ այսքան տարիներէ հետէ ինձ դէմ շարունակ ուղղեալ յարձակմանցն ու զրպարտութեանց. և կը մաղթեմ նոցա համար՝ նաև զներողութիւն արդարադատ Ամենին Աստուծոյ Բարձրելոյ ։

Վերադառնալով Հաճնոյ խնդրոյն, քանի

որ այժմ կ'առաջարկուի կրկին հրաւէր ընել Արեւելքի Խմբագրութեան, ահա այս ժողովոյ մէջ իսկ պաշտօնապէս կը հրաւիրեմ Արեւելքի պատուարժան Վարչութիւնն, որ Կրօն. ժողովոյ յառաջիկայ նստին ներկայանայ ի պատասխանատուութիւն ։

Տեա՛րք Երեսփոխանք, ջանացայ ըստ կարի պատասխանել այն քննադատութեանց որք տեղի ունեցան Կրօնական ժողովոյս Համարատուութեանը դէմ ։ Եւ պատասխանեցի ա՛յնքան հանդարտ ոգւով՝ որքան դատն զոր կը պաշտպանէի՝ լիաւոյն էր և արդար ։ Սիրելի է ինձ յուսալ թէ ոչ միայն դուք՝ այլ նո՛յն իսկ քննադատ պաշտօնակիցք մեր համոզուեցան ընդ այն. զի քաջ կը ճանաչեմ նոցա արդարամտութիւնը ։

Ներեցէք այդ որ եզրակացընեմ խօսքերս, ըսելով. ձենէ պակաս ցաւ չեմք զգար և մեք՝ որ այսօր Թիւրքիոյ Հայ Եկեղեցին մեզ պէս ազնիւ եկեղեցականաց ձեռքով կը մատակարարուի, որ յո՛յժ հեռի եմք արժելէ մեր սրբազան և հոգեշնորհ նախնիքը ։ Մեք իսկ կը խոստովանիմք զայդ. ուրեմն ի՞նչ հարկ որ կշտամբէք զմեզ դառն խօսքերով ։ Միթէ ըստորնացընելով զեկեղեցականութիւնն՝ դարմա՞ն տարած կը լինիք նորա վիճակին ։ Միթէ չճանչելով եկեղեցականութեան բրած ջանքերն ու զոհողութիւնները, բարձրացուցա՞ծ կը լինիք ձեր Եկեղեցին ։ Յիշեցէ՛ք որ այդ Եկեղեցին պիտի կառավարուի դեռ այն եկեղեցականաց ձեռքով՝ որոց դէմ կ'ուղղուին այնքան հրապարակային խծբծանքներ և դառն քննադատութիւններ ։ Դուք՝ բարեկամք և հաւատարիմք ձեր սուրբ և պանծալի Եկեղեցւոյն, չէ՞ք մտածեր թէ ի՛նչ ծանր չփոթ և գայթակղութիւն կը պատճառեն ձեր այդ կծու և չափազանց քննադատութիւններ, և ինչպիսի՛ ուրախութիւն և զէնք ձեր Եկեղեցւոյն թշնամեաց ձեռք ։ Նորա օգուտ կը քաղեն ամեն պարագաներէ, նո՛յն իսկ երեսփոխանաց ոմանց անխորհուրդ և անարդար քննադատութիւններէ ։

Կրօնական ժողովն կը ճանչէ որ իր Համարատուութիւնը կատարեալ գործ մը չէ. այլ և գիտակցութիւն ունի թէ այպանելի գործ մը չէ ։ Կրօն. ժողովոյն համարատուութեան մը առթիւ ի՞նչ իրաւունք կայ տարածել քննադատութիւնը ամբողջ եկեղեցականութեան դէմ ։ Եթէ ձերընտիր Կրօնական ժողովը չունեցած ըլլայ ուրիշ գործունէութիւն, յիշեցէք որ նա քաջութիւն ունեցաւ փրկելու զԱզգն յանիշխանութենէ, ձեռն կարկառելով ի դոյն և հայրաբար խրախուսելով զՔաղաքական ժողովն ։ Այժմ որ դժուարին օրերն անցան, պէտք չէ ժամանակը մաշցընել տայ զանցեալն ։ Պէտք չէ՛ այլքան քննադատութեանց ներքեւ ընկճել այն ժողովն որ բոլոր ոգւովն և անձնանուիրութեամբ աշխատած է ազգային ճգնաժամական միջոցներու մէջ, զուրկ ի Նախագահէն, զուրկ ի գործադիր իշխանութեան ազդեցութենէ և աջակցութենէ. ստիպուած լինելով խորհիլ, քննել, որոշել և գործադրել տալ միանգամայն ։

Այսպիսի արտասովոր պարագայից մէջ միթէ հնա՞ր էր առաւել գործ արտադրել ։ Թո՛ղ նոյն իսկ Ազգային ժողովդ մտածէ՛ արդարութեամբ. միթէ նոյն դժուարին պարագայից մէջ կրցա՞ւ ցուցընել առաւել գործունէութիւն ։

Ձեր Կրօնական ժողովը կը խոստանայ սակայն որ իր երկրորդ ամի Համարատուութիւնը աւելի բեղմնաւոր լինի ։ Սակայն կը յիշեցընէ Ձեզ վերստին, Տեա՛րք, որ եթէ չօգնէք իրեն նիւթականապէս, եթէ ձեր քուէարկեալ փոքրիկ գումարն իսկ չվճարուի ընդ նորա տրամադրութեամբ նաև այս տարի, դրամական չգոյութեան առջեւ պիտի փշրուին Կրօնական ժողովոյ հեռատես որոշումներն և ապարդիւն պիտի մնան ամեն ազգօգուտ խորհուրդք և ծրագիրք ։ Ընծայարանի բացումն ահա կը յապաղի՝ զի դրամ չկայ. թէև վեց ամսէ հետէ բերած է Կրօնական ժողովն զայդ առաջարկութիւն յատեան Ազգ. ժողովոյդ ։ Հոգեւորական հանրօգուտ այցելութիւնք կը մնան

և պիտի ըլլան անգործադրելի, նոյնպէս ու ի չգոյէ դրամի։ Եւ այսպէս՝ կաշկանդեալ կը մնայ ամենէն ազնիւ խորհուրդներով և փափաքներով ոգեւորեալ Վարչական Ժողովն ալ։

Տեա՛րք Երեսփոխանք, դարուս ամենէն լայնատարած հանճարն և մեծ աշխարհակալը ըսաւ. « Յաղթութեան ջիղը՝ դրամն է »։ Մեր գործելու ջիղն ալ դրամն է. առանց նորա՝ կարելի չէ սպասել ոչ քահանայացուց ընծայարանի, ոչ վարդապետանոցի, ոչ բարեզարդութեան եկեղեցականաց, և ոչ՝ վերջապէս՝ իրականացման այն գործերու որոց համար եկեղեցականութիւնը և Կրօնական Ժողովն կը քննադատուին և կընկճուին այսօր, թէև զուր վայրապար, թէև՝ համարձակ կըսեմ, կատարելապէ՛ս յանիրաւի։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Խորէն Սրբազանի այս պերճախօս ատենաբանութիւնն, որով բոլոր քննադատներու միանգամայն պատասխանեց ամփոփ կերպով, կ'ապացուցանէ թէ Հայաստանեայց Եկեղեցին ունի իւր ծոցին մէջ արժանաւոր եկեղեցականներ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կրօն. Ժողովոյ Ատենապետ Սրբազանն լսելէ յետոյ, տակաւին մեր խօսից կարգի տումարին մէջ կերեւին կարգ մը խօսք ուզող երեսփոխանաց անուանքն։ Ուստի՝ բնականաբար՝ խնդրոյն վրայ վիճաբանութեան շարունակութիւնը կը մնայ յաջորդ նստին։

Երեսփոխանք ձայնակցելով Ատենապետ էֆ. ի սոյն առաջարկութեան, ըստ այնմ ԿՈՐՈՇՈՒԻ Կրօն. Ժողովոյ համարատուութեան վրայ՝ վիճաբանութեան շարունակութիւնն թողուլ յաջորդ նստին, որ պիտի գումարուի տասն և հինգ օրէն։

Գ Բացակայք

Երեսփոխաններէն՝

Տ. Խորէն քհնյ. Փէհլիվանեան
Տ. Սարգիս Քհնյ. Ստեփանեան
Յակոբ էֆ. Իւթիւճեան
Ստեփան էֆ. Գօլօլեան
Մանուկ էֆ. Ասլանեան
Խաչիկ էֆ. Կամսարական

Ժողովոյս այս օրուան նիստին երրորդ բացակայութիւն ունեցած լինելով, ԿՈՐՈՇՈՒԻ յառաջիկայ նստի համար ըստ օրինի կոչնագիր յղել անոնց։

Ատեանը կը վերջանայ ժամը 6 ին։

| Ատենադպիր | Ատենապետ |
|---|---|
| Յ. ԳՈՒՐԳԷՆ | Տ. ԵՈՒՍՈՒՖԵԱՆ |

ԱՒԱՆԴԵԼԻ ՈՒՍՄՈՒՆՔ

# ԸՆԾԱՅԱՐԱՆԻ

## ՔԱՀԱՆԱՅԱՑՈՒԱՑ Կ. ՊՈԼՍՈՅ

Ի ՀՆԳԱՄԵԱՑ ՇՐՋԱՆԻ

Ա.—Ուսումն Քրիստոնէական Ս. կրօնի ըստ դաւանութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ.

Բ.—Պատմութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ.

Գ.—Ուսումն կանոնաց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ.

Դ.—Ուսումն աւանդութեանց և ծիսից Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ.

Ե.—Ուսումն եկեղեցական երգեցմանց ձայնագրութեամբ ընդ ժամասացութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ.

Զ.—Ուսումն տարբերութեանց ի դաւանութիւն և ի ծիսս այլադաւան ազգաց.

Է.—Ուսումն հին և նոր կտակարանաց հանդերձ մեկնական բացատրութեամբք.

Ը.—Ուսումն բարոյագիտութեան.

Թ.—Ուսումն ազգային լեզուի և շարագրութեան.

Ժ.—Ուսումն ազգային մատենագրութեան,

ԺԱ.—Պատմութիւն ազգային, հին և նոր.

ԺԲ.—Պատմութիւն ընդհանուր ազգաց.

ԺԳ.—Սկզբունք Օսմանեան լեզուի.

ԺԴ.—Սկզբունք օրէնսգիտութեան և մասնաւորապէս Օսմանեան օրէնսգիտութեան (ըստ քաղաքականի).

ԺԵ.—Սկզբունք առտնին առողջաբանութեան.

# ՑՈՒՑԱԿ

## ԱՄՍԱԿԱՆ ՀԱՍՈՅԹԻՑ

### ԵԿԵՂԵՑԵԱՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՍ

% 3

| | Ղրշ. | Ղրշ. |
|---|---|---|
| Մայր Եկեղեցի | 15000 | 400 |
| Բերայի Եկեղեցի | 15000 | 400 |
| Իւսկ. Ս. Խաչ | 10000 | 300 |
| » » Կարապետ | 10000 | 300 |
| Ղալաթիա | 10000 | 300 |
| Գարա-կէօմրիւկ | 8000 | 240 |
| Խասգիւղ | 8000 | 240 |
| Գատը գիւղ | 8000 | 240 |
| Սամաթիա Ս. Գէորգ | 7000 | 210 |
| Միջագիւղ | 7000 | 210 |
| Պէշիկթաշ | 7000 | 210 |
| Գում գաբուի դուրս | 5500 | 160 |
| Պալատ | 5000 | 150 |
| Եէնի գաբու | 4500 | 135 |
| Պէօյիւքտէրէ | 2500 | 75 |
| Թօփ գաբու | 2000 | 60 |
| Մաքրի գիւղ | 2000 | 60 |
| Գուրու Չէշմէ | 1500 | 45 |
| Ռ. Հիսար | 1500 | 45 |
| Կէտիկ փաշա | 1500 | 45 |
| Գուզկունճուգ | 1500 | 45 |
| Նարլը գաբու | 1500 | 45 |
| Էյուպ Ս. Եղիա | 1300 | 39 |
| Սամաթիա Ս. Յակոբ | 1300 | 39 |
| Էյուպ Ս. Աստուածածին | 1000 | 30 |
| Եէնի գիւղ | 1000 | 30 |
| Գանտիլլի | 1000 | 30 |
| Պէյքօզ | 1000 | 30 |
| Ֆէրի գիւղ | 500 | 15 |
| Գնալը կղզի | 500 | 15 |
| Պօյաճը գիւղ | 400 | 12 |
| Այիաստեֆանօ | 400 | 12 |
| Գասըմ փաշա | 400 | 12 |
| Գումար | 142800 | 4284 |
| Դպրոց դամէն ամսական | | 1000 |
| | | 5284 |

# ՆԻՍՏ Է.

2 ՕԳՈՍՏՈՍ 1885

## ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

### ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

Ա. Վիճակ

1 Սիմէօն Եպս. Սէֆէրեան Բ
2 Արիստակէս Եպիս. Դերձակեն. Բ Պ
3 Գէորգ Վրդ. Իւթիւճեան
4 Խաչատուր Քահ. Տ. Գաբրիէլեն. Բ 2

Բ. Վիճակ

5 Խորէն Արքեպիսկ. Նար–Պէյ
6 Մատթէոս Եպս. Իզմիրլեան
7 Յովհաննէս Քահ. Մկրեան
8 Գրիգոր » Աճէմեան Բ Պ

Գ. Վիճակ

9 Յակոբ Վ. Ա. Փափազեան Բ Պ
10 Խորէն Քահ. Փէհլիվանեան Բ 3
11 Ոսկի Քահ. Օհանեան
12 Յովհաննէս Քհյ. Շահպազեան

Դ. Վիճակ

13 Եղիշէ Վրդ. Այվազեան
14 Յովհաննէս Վ. Սրշարունի
15 Սահակ Քհ. Տ. Սարգսեան Բ Պ
16 Վահան Քհյ. Գրիգորեան

Ե. Վիճակ

17 Յովսէփ Վարդ. Այվազեան
18 Գարեգին » Թասթարեան Բ
19 Սուքիաս Քահ. Ստեփանեան Բ 3
20 Գաբրիէլ » Խանճեան

---

Բ Բացակայութիւն առաջին ։
2 » երկրորդ ։
Պ » բանաւոր պատճառաւ ։

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

Ա. Վիճակ

Գում–Գաբու, Կետիկ–փաշա. եւ Գում–Գաբուի դուրս

21 Յակոբ Գուրգէն
22 Յ. Մէրհէմ–Գուլի
23 Մինաս Զերազ Բ Պ
24 Խաչիկ Կամսարական Բ 3
25 Միհրան Վարդազարեան
26 Մկրտիչ Կիւրճեան
27 Երամ Ճէնազեան
28
29
30
31
32
33
34
35
36
37

Բ. Վիճակ

Պէշիկթաշ

38 Բարսեղ Հալաճեան
39 Յովհաննէս Քէրէստէճեան Բ 2
40 Մելքոն Պարոնիկեան Բ 2

Եէնի–Գաբու

41 Մարուգէ Ֆրէնկեան Բ Պ
42 Պօղոս Էնքսէրճեան
43 Յակոբ Պօշնակեան Բ
44

Իւսկիւտար Ս. Խաչ

45 Սիմէօն Ֆէլէկեան Բ Պ
46 Գաբրիէլ Նորատունկեան Բ Պ
47 Գասպար Գասպարեան Բ
48 Գրիգոր Զիթճեան

Իւսկիւտար Ս. Կարապետ

49 Պօղոս Թորգոմեան Բ
50 Տրդատ Փափազեան Բ
51 Յակոբ Հաճիեան
52 Միհրան Սէթեան Բ Պ

Գ. Վիճակ

Գասըմ–Բաշա

53

Բերա

54 Գրիգոր Սէլիմիյէճեան Բ Պ
55 Ղազար Հովուեան
56 Յարութիւն Պէկեան Բ
57 Նշան Պօյաճեան Բ
58 Վիչէն Օրմանեան
59 Սինեքերիմ Մանուկեան Բ
60 Համբարձում Մագպուլե. Բ
61 Մանուկ Ասլանեան Բ 4
62

Միջագիւղ

63 Տիգրան Եուսուֆեան
64 Մկրտիչ Գազանճեան
65 Մկրտիչ Ծանըմեան Բ
66 Ստեփան Տամատեան
67 Յարութիւն Նորատունկ. Բ

Պէյգօզ եւ Ղալաքիա

68 Միքայէլ Մամիկոնեան Բ

Դ. Վիճակ

Քուզկունճուգ եւ Իճատիէ

69 Մկրտիչ Մէզպուրեան Բ
70 Սիմոն Մաուսեան Բ Պ

Գատըգիւղ

71 Գառնիկ Յովակիմեան

72 Կարապետ Հազարեան Բ Պ

Նարլը-Գաքու

73 Միհրան Տէօքմէճեան

Եէնի-Մահալլէ Սամաթիոյ

74

Թօփ-Գափու

75 Յարութիւն Թիրեաքեան

Էյուպ Ս. Եղիա եւ Ս. Աստուածածին

76

Գուրու-Չէշմէ

77 Կարապետ Սըվաճեան Բ

Հիսար եւ Պօյաճի-Գիւղ

78

Նոր-Գիւղ եւ Սթէնիա

79 Սէպուհ Տէմիրճիպաշեան

Պալատ

80 Մկրտիչ Կիւմիւշեան Բ

81 Ռէթէոս Թադէոսեան

82 Ներսէս Երէցեան

Քարակէօմրիւկ

83 Յովհաննէս Թորոսեան

84 Կարապետ Փանոսեան Բ

Ե. Վիճակ

Սամաթիա

85 Յակոբ Արշակ Բ 2

86 Յովհաննէս Նուրեան Բ

87

88

89

90

91

92

93

94

Խասգիւղ

95 Ռուբէն Պուլկուրեան

96 Նիկողոս Թիւլպէնտճեան Բ Պ

97 Նշան Փափազեան

98

99

100

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

Ա. Վիճակ

Զմշկածագ

101

Գաղատիա

102

Ատանա

103

Սղերդ

104 Մատթէոս Ալէքսանեան Բ

Եօզղատ

105

Մալաթիա

106 Գէորգ Վարդանեան

Իզմիր

107 Պօղոս Տիւպէրեան

Եգիպտոս

108 Աբրահամ Մուրատեան Բ 2

Բ. Վիճակ

Պրուսա

109 Քրիստոստուր Ղազարոսեան

Եւդոկիա

110

Ամասիա

111 Համբարձում Ալաճաճեան Բ

Բալու

112

Եղեսիա

113 Յակոբ Իւթիւճեան Բ 3

Մանճըլըխ

114

Հաճըն

115

Երզնկա

116 Ռեթէոս Պէրպէրեան

Գ. Վիճակ

Կարին

117 Սերովբէ Ագնաւորեան

Քէօթահիա

118 Աւետիս Թընկրեան

Ադրիանուպօլիս

119

Նիկոմիդիա

120 Կարապետ Ս. Իւթիւճեան Բ

Ակն

121 Յակոբ Գորեան Բ 2

Ղարահիսար

122 Կարապետ Երէցեան Բ

Արաբկիր

123 Կարապետ Խաչիկեան Բ

Բաղէշ

124 Արփիար Արփիարեան

Գ. Վիճակ

Թէքիրտաղ

125 Տիգրան Գ. Սինանեան Բ Պ

Կեսարիա

126

Խարբերդ

127

Պալըքեսէր

128 Ստեփան Գօլօլեան Բ 3

Մուշ

129 Ստեփան Փափազեան

Տիվրիկ

130 Նշան Գարագաշ

Զէյթուն եւ Մարաշ

131

Տրապիզօն

132

Ե. Վիճակ

Պաղտատ

133 Կարապետ Սէթեան

Տիգրանակերտ

134 Միհրան Չօպանեան

Վան

135 Մարկոս Աղաբէգեանց

Ադրամար

136

Հալէպ եւ Այնթապ

137

Սեբաստիա

138 Մկրտիչ Յ. Մէլիքեան

Ռուսճուգ

139

Բաբերդ

140

# ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ԱՆԴԱՄՔ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. | Տ. | Խորէն | Արքեպս. | Նար—Պէյ | Ա. Ատենապետ |
| 2. | » | Սիմէոն | Եպս. | Սեֆէրեան | Բ. » |
| 3. | » | Մատթէոս | » | Իզմիրլեան | |
| 4. | » | Գարեգին | Վրդ. | Թաթարեան | |
| 5. | » | Վահան | » | Տ. Մինասեան | Ա. Ատենադպիր |
| 6. | » | Տաճատ | » | Ոսկանեան | Բ. » |
| 7. | » | Յակոբ | » | Ա. Փափազեան | |
| 8. | » | Յովհաննէս | » | Արշարունի | |
| 9. | » | Յովհաննէս | Քհնյ. | Մկրեան | |
| 10. | » | Սահակ | » | Տ. Սարգսեան | |
| 11. | » | Սուքիաս | » | Ստեփանեան | |
| 12. | » | Գրիգոր | » | Աճէմեան | |
| 13. | » | Խորէն | » | Փէհլիվանեան | |
| 14. | » | Կարապետ | » | Սէթեան | |

## ԱՆԴԱՄՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Յովհաննէս | Էֆէնտի | Նուրեան | Ա. Ատենապետ |
| 2. | Գաբրիէլ | » | Նորատունկեան | Բ. » |
| 3. | Համազասպ | » | Պալլարեան | Ա. Ատենադպիր |
| 4. | Յովհաննէս | » | Պօյաճեան | Բ. » |
| 5. | Աբիկ | » | Ունճեան | |
| 6. | Ալիքսան | » | Սաքաեան | |
| 7. | Խաչիկ | » | Կամսարական | |
| 8. | Կոստանդ | » | Կոստանդեան | |
| 9. | Միհրան | » | Սէթեան | |
| 10. | Յակոբ | » | Ֆրէնկեան | |
| 11. | Սերովբէ | | Կիւլպէնկեան | |
| 12. | Սինեքերիմ | » | Մանուկեան | |
| 13. | Տիգրան | » | Բարաղամեան | |
| 14. | Տիգրան | » | Կիւմիւշկէրտանեան | |

## ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

### ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. — Յայտարարութիւն Ս. Պատրիարք Հօր ․
2. — Բացակայութիւնք ․
3. — Երեսփոխանական հրաժարագիր Գ. Էֆէնտի Զերազի ․
4. — Վաւերացումն Երեսփ. ընտրութեանց Գում-Գաբուի եւ Զմիւռնիոյ ․
5. — Վաւերացումն ներկայ շրջանի Ե. եւ 83րդ շրջանի Թ. Նիստերու Ատենագրութեանց ․
6. — Տեղեկագիր Համարատուութեան Ս. Երուսաղիմայ միաբանութեան ընդհ. ժողովոյ, Հաշուեցոյց 1884—85 ամի եւ Ելմտացոյց 1885-86 ամի ․

### ՕՐԱԿԱՐԳ

Տեղեկագիր Համարատուութեան Ազգային կեդր. Վարչութեան կրօն. ժողովոյ ․

Գ. բացակայութիւնք